ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն

2019

Ուսումնասիրությունն իրականացվել է «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում:
Ծրագիրն իրականացնում է «Հայկական բիզնես կոալիցիան» ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:
Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագիրն իրականացնող կոնսորցիումը, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական Միության պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ 5

ԲԱԺԻՆ 1. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԶԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖՈՐՄԱԼ ԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ 9

1.1 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ 9

1.2 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 11

1.3 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ 12

ԲԱԺԻՆ 2. «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՎԱԾ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ 16

2.1 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՎԱԾ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՍՏ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ 16

2.2 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ 26

2.3 «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՎԱԾ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՍՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾՐԶԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՆԿԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ 31

ԲԱԺԻՆ 3: «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱՂԱԴՐԻՉԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԶԱՆԱԿՆԵՐՈՒՄ 36

3.1 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ» ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ 36

3.2 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՁԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԾՐԶԱՆՈՒՄ 42

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 45

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՁԿ	Ձեռնարկատիրական կրթություն
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՆՄՄԿ	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն
ՍՁ	Սոցիալական ձեռնարկատիրություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն Զարգացման ազգային կենտրոն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ձեռնարկատիրական կրթության զարգացման անհրաժեշտությունը հիմնավորված է ՀՀ 2014-2025 թ.թ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի նիստի N 47 արձանագրային որոշման հավելվածի ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 44 որոշման հավելվածի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարության» 44-րդ և 45-րդ կետերով: 2017 թվականին Հայաստանի հանրակրթական մի շարք դպրոցներում փորձնական ներդրվեց «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան, որի նպատակն էր խթանել ՀՀ ուսումնական հաստատությունների շրջանավարտների ձեռնարկատիրական գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացումը: Ձեռնարկատիրական կրթության համալիր ներդրումը նախատեսվում է հանրակրթական համակարգում իրականացնել 4 տարիների ընթացքում՝ 2017-2020 թվականների ընթացքում՝ տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում՝ որպես ինտեգրվող բաղադրիչ «Տեխնոլոգիա» առարկայի մեջ, հիմնական դպրոցի 5-7-րդ դասարաններում՝ որպես ինտեգրվող բաղադրիչ «Տեխնոլոգիա» կամ այլ առարկայի մեջ, ավագ դպրոցի 10-րդ դասարանում՝ որպես տեսական, 11-րդ դասարանում՝ որպես գործնական բաղադրիչներ: Դասընթացի ներդրումն իրականացվում է Կրթության և գիտության նախարարության և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության համատեղ ջանքերով:

2018 թվականի սեպտեմբերից հանրապետության բոլոր դպրոցների 2-րդ և 3-րդ դասարաններում ներդրվել է «Տեխնոլոգիա» առարկայում ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրման ծրագիրը, իսկ 2017-2018 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող շուրջ 200 ուսումնական հաստատությունի 10-րդ և 11-րդ դասարաններում իրականացվել է «Ձեռնարկատիրական կրթություն» առարկայի ներդրման փորձնական ծրագիրը: 2018-2019 ուսումնական տարվանից սկսած «Ձեռնարկատիրական կրթություն» ներդրումը ավագ դպրոցում, որպես երաշխավորված առարկա, իրականացվում է դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին: Փորձնական ծրագիրն իրականացնելու նպատակով «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը մշակել և հեղինակել է ուսուցչի ուղեցույցներ, մեթոդական և օժանդակ նյութեր, վերապատրաստվել են 1247 հիմնական դպրոցների 1356 ուսուցիչ: Հենց այդ ուսուցիչների կողմից էլ 2017-2018 ուստարում ծրագիրը փորձարկվել է այդ դպրոցների 1-ական 2-րդ և 3-րդ դասարաններում, ընդհանուր առմամբ՝ շուրջ 62 900 սովորողների շրջանում:

Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և «Իրավաբանների հայկական ասոցիացիայի» կողմից ղեկավարվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում Հայկական բիզնես կոալիցիան իրականացվում է «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ենթադրամաշնորհային ծրագիրը, որի ներքո, ի թիվս այլ գործողությունների, իրականացվել է նաև հանրակրթական

դպրոցներում «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի ներդրման արդյունավետության գնահատում և սոցիալական ձեռնարկատիրության ուսուցման հնարավորությունների ուսումնասիրություն ընտրված թիրախային երեք քաղաքներում՝ **Երևանում, Գյումրիում և Գավառում:** Հետազոտությունը կազմված է եղել երկու բաղադրիչներից: **Առաջին բաղադրիչի** հիմնական նպատակն է եղել ուսումնասիրել, թե որքանով արդյունավետ է ընտրված դպրոցներում իրականացվում ձեռնարկատիրական կրթության դասընթացը: **Երկրորդ բաղադրիչով** ուսումնասիրվել է, թե որքանով է ձեռնարկատիրական կրթության դասընթացն անդրադառնում սոցիալական ձեռնարկատիրությանը և ինչպես կարող է սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ դասընթացի նյութը ներդրվել դպրոցական կրթական համակարգում:

Հետազոտական խնդիրների բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է որակական և քանակական մեթոդների համադրությամբ: Հետազոտության շրջանակներում իրականացվել է Հայաստանում ձեռնարկատիրական կրթության զարգացմանն ուղղված կրթական ծրագրերի քարտեզագրում և այս շրջանակներում արձանագրված հաջողված դեպքերի ուսումնասիրություն: Որպես հետազոտության իրականացման մեթոդներ կիրառվել է դասալսումների մեթոդը, իրականացվել է ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված աշակերտների անկետավորում: Դասընթացի ազդեցության գնահատման նպատակով իրականացվել է նաև անկետավորում ստուգիչ խմբի համար, որից հետո վիճակագրական թեստերի միջոցով համեմատվել են ստացված արդյունքները ազդեցության և ստուգիչ խմբերի համար: Իրականացվել է նաև 11 ֆոկուս խմբային քննարկում «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ, ինչպես նաև խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ, որոնց թվում են եղել ընտրված դպրոցների տնօրենները, ձեռնարկատիրական կրթություն առարկան դասավանդող ուսուցիչները, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ մարզային ներկայացուցիչները: Հետազոտության երկրորդ բաղադրիչի շրջանակներում իրականացվել է փաստաթղթերի որակական վերլուծություն, որտեղ որպես փաստաթղթեր են ծառայել ձեռնարկատիրության ուսուցման շրջանակներում գոյություն ունեցող դասագրքերը և մեթոդական ձեռնարկները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ

Հետազոտության բաղադրիչներ՝

Հետազոտությունը կազմված է երկու բաղադրիչներից՝

- Բաղադրիչ 1-ին: «Ձեռնարկատիրական կրթություն դասընթացի ներդրման արդյունավետության գնահատում»
- Բաղադրիչ 2-րդ: «Սոցիալական ձեռնարկատիրության ներդրման հնարավորություն»

Կիրառված մեթոդներ

Հետազոտության շրջանակներում կիրառվել են որակական և քանակական մեթոդներ՝

- Ձեռնարկատիրական կրթության զարգացման շրջանակներում իրականացվող ֆորմալ կրթական ծրագրերի քարտեզագրում
- «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի դասալսումներ
- Անկետավորում աշակերտների շրջանում ստուգիչ և ազդեցության խմբերի համար
- Խորին հարցազրույցներ դասընթացը վարող ուսուցիչների հետ
- Խորին հարցազրույցներ ընտրված դպրոցների տնօրենների հետ
- Խորին հարցազրույցներ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ մարզային ներկայացուցիչների հետ
- Ֆոկուս խմբեր «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ
- Փաստաթղթերի որակական վերլուծություն

Հետազոտության աշխարհագրություն

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի երեք քաղաքներում՝

- Ք. Երևան
- Ք. Գյումրի
- Ք. Գավառ

Ընտրված դպրոցներ

Հետազոտության ընտրանքում ներառված են եղել հետևյալ դպրոցները՝

Քաղաք	Հիմնական դպրոց	Ավագ դպրոց
Ք. Երևան	▪ Երևանի հ.27 հիմնական դպրոց ▪ Երևանի հ.100 հիմնական դպրոց	▪ Երևանի հ. 105 ավագ դպրոց ▪ Երևանի Մ. Գալշոյանի անվան թիվ 148 ավագ դպրոց
Ք. Գյումրի	▪ Գյումրու հ.9 հիմնական դպրոց ▪ Գյումրու հ.30 հիմնական դպրոց	▪ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց ▪ Գյումրու թիվ 26 ավագ դպրոց
Ք. Գավառ	▪ Գավառի Ա. Իսահակյանի անվան հ.4 հիմնական դպրոց ▪ Գավառի հ.1 հիմնական դպրոց	▪ Գավառի ավագ դպրոց

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Հետազոտության նպատակներն են՝

1) ուսումնասիրել, թե որքանով արդյունավետ է իրականացվում ձեռնարկատիրական կրթության դասընթացը ընտրված դպրոցներում
2) ուսումնասիրել, թե որքանով է ձեռնարկատիրական կրթություն դասընթացն անդրադառնում սոցիալական ձեռնարկատիրությանը:

Հետազոտության առջև դրված խնդիրներն են՝

1. Քարտեզագրել ֆորմալ կրթական ծրագրերը, որոնք ուղղված են կրթական երեք մակարդակներում՝ հանրակրթական, միջին մասնագիտական և բուհական, ձեռնարկատիրական կրթության զարգացմանը:

2. **Պարզել թե ինչպիսին է եղել ձեռնարկատիրական կրթություն առարկայի դասավանդման ազդեցությունը՝**
   - Պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի դասավանդումը աշակերտների շրջանում գիտելիքների և հմտությունների զարգացման բաղադրիչի համատեքստում,
   - Պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի դասավանդումը աշակերտների շրջանում ձեռնարկատիրության նկատմամբ դիրքորոշումների փոփոխության բաղադրիչի համատեքստում,
   - Պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի դասավանդումը աշակերտների շրջանում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի համատեքստում:

3. **Դասընթացի ներդրման արդյունավետության գնահատում՝**
   - Պարզել, թե որքանով արդյունավետ է իրականացվել դասընթացի ներդրումը ընտրված դպրոցներում,
   - Պարզել, թե որ մեթոդներն են առավել արդյունավետ դասընթացի ուսուցման համար,
   - Պարզել, թե ինչպիսի դիրքորոշումներ ունեն դասընթացում ներգրավված աշակերտների ծնողները դասընթացի վերաբերյալ:

4. **Սոցիալական ձեռնարկատիրության առարկայի ներդրման հնարավորություն՝**
   - Պարզել, թե ներդրված «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան որքանով է անդրադառնում սոցիալական ձեռնարկատիրությանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ

Հաշվի առնելով հետազոտության նպատակները և հետազոտության առջև դրված խնդիրները և ուսումնասիրվող հարցերը՝ իրականացվել է հետազոտական մեթոդների տրանգուլյացիա (հետազոտվող օբյեկտի մասին տեղեկատվություն հավաքվել է մի քանի մեթոդների կիրառումով)՝ ներառելով ինչպես որակական մեթոդներ, այնպես էլ քանակական:

Հետազոտության **Առաջին բաղադրիչի՝ «Ձեռնարկատիրական կրթության դասընթացի արդյունավետության գնահատում» շրջանակներում** իրականացվել է «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի դասերի դասալսումներ, անկետավորում դասընթացում ներգրավված աշակերտների շրջանում՝ կիրառելով ազդեցության խմբի և ստուգիչ խմբի համեմատության սկզբունքը, ֆոկուս խմբային քննարկումներ դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների շրջանում, ինչպես նաև խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ: Իրականացվել է նաև հանրապետությունում վերջին հինգ տարիների ընթացքում ներդրված կրթական այն ծրագրերի քարտեզագրում, որոնք ուղղված են ձեռնարկատիրական կրթության զարգացմանը երեք կրթական մակարդակներում՝ հանրակրթություն, միջին մասնագիտական կրթություն և բարձրագույն կրթություն:

Հետազոտության շրջանակներում կիրառված մեթոդներն առավել մանրամասն ներկայացված են ստորև՝

«Ձեռնարկատիրական կրթությանն» ուղղված ծրագրերի քարտեզագրում: Վերջին մի քանի տարիների ընթացքում նոր թափ է ստանում դպրոցներում, նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում ձեռնարկատիրական կրթության զարգացման ուղղությամբ տարվող ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացումը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ իրականացվել է ձեռնարկատիրական կրթության զարգացման ուղղությամբ իրականացվող ֆորմալ կրթական ծրագրերի քարտեզագրում երեք մակարդակներում՝ հանրակրթություն, նախնական և միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն: Իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է տեղեկատվության հարցման և պաշտոնական նամակագրությունների միջոցով: Տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումներ են ներկայացվել Կրթության և գիտության նախարարությանը, ՀՀ-ում գործող պետական և մասնավոր բուհերին, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններին և միջազգային դոնոր կազմակերպություններին:

«Ձեռնարկատիրական կրթություն» առարկայի դասերի դասալսումներ: «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի շրջանակներում իրականացվող դասաժամերի լսումները նկարագրում են ձեռնարկատիրության վերաբերյալ գիտելիքների, կարողությունների և հմտությունների փաստացի փոխանցման գործընթացը՝ այդպիսով

հնարավորություն տալով զատորոշել բոլոր այն մեթոդները և գործիքները, որոնք առավել արդյունավետ են և աշխատող: Դասալսումներն իրականացվել են հետազոտության ընտրանքում ներառված բոլոր 11 դպրոցներում՝ ընդգրկելով «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացն ուսանող յուրաքանչյուր դասարանում մեկական դասաժամ: Դասալսումներն իրականացվել են դիտարկման քարտի կիրառությամբ: Դիտարկման քարտը լրացվել է դասալսողի կողմից ազատ բովանդակությամբ, ինչը նշանակում է, որ դասալսող մասնագետն ըստ առաջարկվող դիտարկման բաղադրիչների և հարցերի նկարագրել է դասի ընթացքը: Կիրառվել է մասնագետի կողմից դասաժամի ամբողջական դասալսման տարբերակը:

Ֆոկուս խմբային քննարկում ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ: Հետազոտության շրջանակներում իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ: Իրականացվել են 11 խմբային քննարկումներ ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ՝ համապատասխանաբար 1-ական քննարկում յուրաքանչյուր ընտրված դպրոցում: Յուրաքանչյուր ֆոկուս խումբ կազմված է եղել նույն տարիքային խումբ ներկայացնող աշակերտների ծնողներից, այսինքն առանձին մեկ ֆոկուս խմբի դեպքում ներգրավված են եղել 2-3-րդ դասարաններում սովորող աշակերտների ծնողներ, մյուս դեպքում՝ 10-11-րդ դասարանների: Միջինում յուրաքանչյուր ֆոկուս խմբին մասնակցել է 8 ծնող: Ֆոկուս խմբերում ներառվել են տարբեր զբաղվածություն ունեցող ծնողներ՝ աշխատող, տնտեսապես ոչ ակտիվ, գործազուրկ: Ֆոկուս խմբային քննարկումները անցկացվել են նախապես մշակված ուղեցույցի հիման վրա:

Խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ: Խորին հարցազրույցներ են իրականացվել ձեռնարկատիրական կրթություն առարկան դասավանդող ուսուցիչների, դպրոցի տնօրենների և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ-ի մարզային ներկայացուցիչների հետ: Այս մեթոդի կիրառության դեպքում տեղեկատվության ստացման աղբյուր են հանդիսացել ոչ թե «ծառայություն ստացողները», այլ ծառայություն տրամադրողները: Ընդհանուր առմամբ այսպիսի հարցազրույցներ են իրականացվել ընտրված թիրախային բոլոր դպրոցների տնօրենների, յուրաքանչյուր դպրոցում մեկական ՁԿ դասավանդող ուսուցչի և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ երեք մարզային ներկայացուցիչների հետ: Խորին հարցազրույցներն իրականացվել են նախապես մշակված ուղեցույցի հիման վրա:

Անկետավորում ՁԿ ուսանող աշակերտների շրջանում: Ձեռնարկատիրական կրթություն առարկայի ազդեցության գնահատման համար 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների շրջանում իրականացվել է **անկետավորում,** որի շրջանակներում աշակերտներն ինքնուրույն լրացրել են կազմված հարցաթերթը: Կիրառվել է ազդեցության խմբի և ստուգիչ խմբի համեմատության մեթոդը: Ձևավորվել է ստուգիչ խումբ, որում ներառված են եղել համանման դպրոցների նույն դասարանների աշակերտներ, ովքեր սակայն չեն անցել ձեռնարկատիրական կրթություն դասընթացը:

Անկետավորման ընտանքը համատարած է՝ ներառելով ընտրված դպրոցներում ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված 10-րդ և 11-րդ դասարանների բոլոր աշակերտներին: Ազդեցության խմբում և ստուգիչ խմբում ներառվել են հավասար թվով աշակերտներ՝ պահպանելով սեռային նույն բաշխվածությունը երկու խմբերում էլ: Ընդհանուր առմամբ անկետավորմանը ներգրավվել են 110-ական աշակերտներ ազդեցության և ստուգիչ խմբերից յուրաքանչյուրում, որոնց կազմում անկետավորմանը մասնակցած աշակերտների 43%-ը եղել է արական սեռի ներկայացուցիչներ, 57%-ը՝ իգական:

Անկետավորման համար կիրառվել է կիսաձևայնացված հարցաթերթ, որտեղ ներառված են եղել բաց, փակ և կիսաբաց հարցեր: Ստուգիչ խմբի համար կազմված հարցաթերթը որոշ հարցերով տարբերվել է ազդեցության խմբի հարցաթերթից, սակայն հիմնական հարցերը և ոլորտները եղել են նույնը երկու խմբերի համար էլ: Հարցաթերթում ներառված են եղել հնարավորինս պարզ ձևակերպմամբ հարցեր, որպեսզի վերջինիս լրացումը դժվարություն չներկայացնի 10-11-րդ դասարանների աշակերտների համար: Հարցաթերթերի լրացման ընթացքը վերահսկվել է համակարգողների կողմից, ովքեր հարցաթերթերի լրացման ընթացքում պարզաբանումներ են ներկայացնել աշակերտներին հարցեր առաջանալու դեպքում և ստուգել են հարցաթերթերի լրացվածությունը:

Ձեռնարկատիրական կրթություն առարկայի դասավանդման ազդեցության գնահատման համար դուրս են բերվել այն կատեգորիաները/բաղադրիչները, որոնց շուրջ կառուցվել է ազդեցության գնահատումը: Ենթադրվում է, որ ձեռնարկատիրական կրթություն առարկայի ներդրումը ունեցել է ազդեցություն երեք մակարդակներում՝ **կոգնիտիվ** (գիտելիք, կարողություններ և հմտություններ), **աֆֆեկտիվ** (վերաբերմունք, դիրքորոշումներ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նկատմամբ) և **վարքային** (փոփոխություններ, որոնք նպաստել են, որ աշակերտները սեփական նախաձեռնությամբ զբաղվեն ձեռնարկատիրական գործունեությամբ): Այս բաղադրիչները հանդիսանում են «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի ազդեցության օպերացիոնալ սխեմայի մաս:

Հետազոտության **Երկրորդ բաղադրիչի՝ «Սոցիալական ձեռնարկատիրության ներդրման հնարավորությունը» ներքո իրականացվել է որակական կոնտենտ վերլուծություն,** որի շրջանակներում վերլուծության են ենթարկվել «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի համար նախատեսված դասագրքերը, այլ առարկաների դասագրքերում ինտեգրված հատվածները և դասընթացի վերաբերյալ մեթոդական ձեռնարկները: Այս բաղադրիչի ներքո ենթադրվող մի շարք հարցերի պատասխանները ստացվել են առաջին բաղադրիչի շրջանակներում կիրառված մեթոդների միջոցով:

ԲԱԺԻՆ 1. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖՈՐՄԱԼ ԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

1.1 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Կարևորելով փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման հարցում ձեռնարկատիրական կրթության առանցքային և կարևոր դերը՝ Հայաստանի հանրակրթական դպրոցներում 2017 թվականից սկսած սկսել է ներդրվել «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացը: 2018-2019 ուսումնական տարում առարկան հանրակրթական բոլոր ուսումնական հաստատությունների 2-րդ և 3-րդ դասարաններում ներդրվել է «Տեխնոլոգիա» առարկայում որպես ձեռնարկատիրական տարրերի ինտեգրված բաղադրիչ: 2017-2018 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող շուրջ 200 ուսումնական հաստատությունի 10-րդ և 11-րդ դասարաններում իրականացվել է «Ձեռնարկատիրական կրթություն» առարկայի ներդրման փորձնական ծրագիր: 2018-2019 ուսումնական տարվանից սկսած՝ «Ձեռնարկատիրական կրթություն» ներդրումը ավագ դպրոցում, որպես երաշխավորված առարկա, իրականացվում է դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին: Հանրակրթության ոլորտում «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի ինտեգրումն իրականացվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից: Վերջինս ՀՀ հանրակրթության բնագավառում ձեռնարկատիրական և ֆինանսական կրթության ծրագրեր է իրականացնում դեռևս 1992 թվականից (վերապատրաստվել է շուրջ 1500 ուսուցիչ, վերոհիշյալ ծրագրերին մասնակցել է ավելի քան 200000 աշակերտ): «Ձեռնարկատիրական կրթություն» առարկայի հիմնական նպատակն է սովորողներին հաղորդել գործարարության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև նրանց մոտ ձևավորել որոշակի համոզմունքներ, վստահություն, արժեքներ և վերաբերմունք ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ: Դասընթացը կրում է ինտերակտիվ բնույթ՝ հենվելով աշակերտակենտրոն ուսուցման առավելությունների վրա:

Ձեռնարկատիրական կրթության համալիր ներդրումը նախատեսվում է հանրակրթական համակարգում իրականացնել 4 տարիների ընթացքում (2017թ. սեպտեմբերից 2020թ. սեպտեմբեր)՝ տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում՝ որպես ինտեգրվող բաղադրիչ «Տեխնոլոգիա» առարկայի մեջ, հիմնական դպրոցի 5-7-րդ դասարաններում՝ որպես ինտեգրվող բաղադրիչ «Տեխնոլոգիա» կամ այլ առարկայի մեջ, ավագ դպրոցի 10-րդ դասարանում՝ որպես տեսական, 11-րդ դասարանում՝ որպես գործնական բաղադրիչներ: Ինտեգրվող և հիմնական նյութը փոխլրացնում են միմյանց՝ կազմելով ամբողջական միավոր, առանց ձախողելու դասի նպատակը:

Մինչ ՁԿ դասընթացի ներդրումը ձեռնարկատիրական և ֆինանսական կրթության ծրագրերը իրականացվում էին դպրոցների կողմից լրացուցիչ կրթության ձևաչափով՝ այլ ոչ պարտադիր բաղադրիչի շրջանակներում, և միայն 2017 թվականից հետո է, որ մի շարք հանրակրթական դպրոցներում այս առարկան ներդրվեց որպես պարտադիր բաղադրիչ: Փորձնական ծրագիրն

իրականացնելու նպատակով «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը մշակել և հեղինակել է ուսուցչի ուղեցույցներ, մեթոդական և օժանդակ նյութեր, վերապատրաստվել են 1247 հիմնական դպրոցների 1356 ուսուցիչ: Հենց այդ ուսուցիչների կողմից էլ 2017-2018 ուստարում ծրագիրը փորձարկվել է այդ դպրոցների 1-ական 2-րդ և 3-րդ դասարաններում, ընդհանուր առմամբ՝ շուրջ 62 900 սովորողների շրջանում:

1.2 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներում ներառված են ձեռնարկատիրական կրթությանը վերաբերող երկու մոդուլներ՝ «Կազմակերպության և առանձին ստորաբաժանումների գործունեության կազմակերպում» և «Կազմակերպության էկոնոմիկա և կառավարում»: 2016 թվականից սկսած ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը՝ ՓՄՁ Զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ) և Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության (ԳՄՀԸ) կազմակերպության հետ համատեղ նախաձեռնել է «Ձեռներեցություն» մոդուլի և դրան համապատասխան մոդուլային ծրագրի մշակման աշխատանքները: Մոդուլը ներառվել է 2017թ. մշակված և վերանայված 31 և 2018թ. մշակված 24 ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչներում: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՄԿՈՒ ուսումնական հաստատություններին հանձնարարվել է մինչև 2018 թվականի հունիսի 1-ը ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների և որակավորումների գործող ուսումնական պլաններում պարտադիր ներառել «Ձեռներեցություն» մոդուլը: 2017թ. համատեղ մշակվել է 3 ձեռնարկ՝ մոդուլի վերապատրաստողներ վերապատրաստողի (ToT), դասավանդողի և սովորողի համար: 2017թ. իրականացվել է «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» մոդուլի դասընթացավարների վերապատրաստում: Վերապատրաստվել են 26 ուսումնական հաստատությունների մասնագետներ: 2018թ. ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի կողմից կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ «Ձեռներեցություն» մոդուլի դասավանդման ուղղությամբ: Վերապատրաստումներից 5-ը կազմակերպվել են մարզերում, 4-ը՝ Երևանում: Վերապատրաստվել են շուրջ 200 դասավանդող:

Մշակման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2018-2022 թվականների ռազմավարությանը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այս ռազմավարությունում մասնավորապես նշվում է, որ կարևորվում է ձեռնարկատիրական մարդկային կապիտալի ռազմավարական նշանակությունը Հայաստանի տնտեսության զարգացման համար և ՆՄՄԿ համակարգի գերակայություններից է սահմանվում երիտասարդության զբաղվածության և ձեռներեցային գործունեության խթանումը, ինչպես նաև ձեռներեցության ուսումնառության փորձնական ինտեգրումը ազգային ուսումնական պլաններում և դասավանդողների վերապատրաստումը, որոնք ներքոնշյալ միջոցառումների ձևով արտացոլվել են ՆՄՄԿ ռազմավարությունում՝

- ՆՄՄԿ կրթական չափորոշիչներում ձեռներեցության մոդուլի մշակում և ներդրում,
- ՆՄՄԿ ոլորտում ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնամեթոդական նյութերի և ձեռնարկների մշակում և փորձարկում,
- ՆՄՄԿ դասավանդողների և կառավարում իրականացնողների վերապատրաստում՝ ձեռներեցության մոդուլով:

1.3 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ

ՀՀ պետական և ոչ պետական բուհերի կողմից ձեռնարկատիրական կրթության զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերը ներկայացված են ստորև՝

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) կողմից իրականացվում է «Գործարար վարչարարություն» ծրագիրը, որը մեկ կիսամյակ տևողությամբ իրականացվող ծրագիր է: Այն ուսումնասիրում է սոցիալական ձեռնարկատիրության տեսական հիմքերը, ընդհանուր խնդիրները: ՀԱՀ-ի կողմից իրականացվում է նաև «Ձեռնարկատիրություն և նորարարություն» 15-շաբաթյա դասընթացը բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողների համար: ՀԱՀ-ում գործում է նաև Ձեռներեցության և նորարարական տեխնոլոգիաների կենտրոնը (EPIC), որի կողմից իրականացվում է EPIC ինկուբատոր ծրագիրը: Այն 12-շաբաթյա գաղափարային փուլի նորաստեղծ ինկուբացիոն ծրագիր է, որն օգնում է վաղ փուլում գտնվող թիմերին գաղափարների վավերացման և բիզնես մոդելի ստեղծման գործում: Ծրագրի շրջանակներում անդամ թիմերը սովորում են lean գործարկման հիմունքները և ստանում առաջնորդություն և մենթորություն փորձառու ձեռնարկատերերի կողմից, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվություն տարբեր բիզնես ոլորտի մասնագետների կողմից:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում (ՀԱՊՀ) և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում (ՃՇՀԱՀ) ԵՄ ERASMUS+ ծրագրի շրջանակներում իրականացվում է «Ճարտարագիտական կրթության ոլորտում ինովացիոն կարողությունների և ձեռնարկատիրական հմտությունների ընդլայնում» (InnoCENS) ծրագիրը, որի նպատակն է նպաստել ուսանողների ինովացիոն կարողությունների և ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը և դյուրացնել բուհ-արտադրություն համագործակցությունը և նորարարական գաղափարների առևտրայնացումը: Ծրագրի համակարգողը Ստոկհոլմի տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտն է, որին մասնակցում են նաև 7 երկրների 19 գործընկեր կազմակերպություններ: Ծրագրի շրջանակներում ՃՇՀԱՀ-ում 2018 թվականի մայիսին բացվել է «Նորարարության և ձեռներեցության աջակցման կենտրոնը», որի նպատակն է հարթակ ծառայել ձեռնարկատիրական դասընթացների իրականացման, ստարտափ թիմերի ձևավորման, մրցույթների և հանդիպումների կազմակերպման համար: Մշակման փուլերում են գտնվում «Ինովացիոն համակարգեր» և «Ձեռներեցությունը ինժեներների համար» դասընթացները:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործում է Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնը, որի կողմից իրականացվում է «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բակալավրիատի ծրագիրը, «Ձեռնարկատիրական գործունեություն» և «Ձեռնարկությունների տնեսագիտություն» մագիստրոսական ծրագրերը, «Բիզնեսի

կազմակերպում» մագիստրոսական ծրագիրը, որի շրջանակներում գործում է նաև «Բիզնեսի գնահատում» կրթական ծրագիրը, իսկ Ֆինանսական ֆակուլտետի Ֆինանսներ ամբիոնի կողմից իրականացվում է «Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրը: Այս կրթական ծրագրերի նպատակն է պատրաստել բարձրորակ մասնագետներ առևտրային կազմակերպությունների գործունեության կազմակերպման ոլորտում: Բակալավրիատում ուսումնառության տևողությունը առկա համակարգում 4 տարի է, հեռակա համակարգում՝ 5 տարի, իսկ մագիստրատուրայի դեպքում առկա կրթական ծրագրի տևողությունը երկու տարի է, հեռակա՝ 2,5 տարի:

Հայաստանի ազգային ագրարարային համալսարանի մասնագիտություններում դասավանդվում են մի շարք առարկաներ՝ համալսարանում իրականացվող ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում, որոնք միտված են ուսանողների մոտ ձևավորելու ձեռնարկատիրական մտածելակերպ և գործելակերպ՝ ձևավորելով ուսանողների շրջանում գործարարության հմտություններ, մասնավորապես՝ ձեռնարկատիրական տարբեր թեմաներ ներառված են «Ագրարարային էկոնոմիկա», «Ֆերմերային գործի կազմակերպում և կառավարում», «Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների կառավարում», «Ձեռնարկատիրական գործունեություն» առարկաների շրջանակներում: Ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի բարձրագույն դպրոցի (ATC) և «Ագրարային մենեջմենթ» գերմանական ծրագրերում մագիստրատուրայում մրջազգային չափորոշիչներով դասավանդվում են ձեռնարկատիրությանն առնչվող մի շարք առարկաներ, մասնավորապես «Ձեռնարկատիրական գործունեություն», «Ձեռնարկության վերլուծություն և վերահսկում», «Ձեռնարկությունների պլանավորում», «Նախագծերի պլանավորում, գնահատում» և «Ձեռնարկությունների խորհրդատվություն»:

Երևանի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետներում բակալավրիատի կրթական ծրագրում որպես կամընտրական դասընթաց 4-րդ գարնանային կիսամյակում ուսանողներին առաջակվում է «Գործարարության հիմունքներ» դասընթացը: ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կրթական ծրագրերը ներառում են նաև ձեռնարկատիրական կրթության հետ ուղղակի առնչվող հետևյալ դասընթացները՝ «Բիզնեսի կազմակերպում և կառավարում», «Նորարարությունների կառավարում», «Տեխնոլոգիաների ձեռներեցություն», «Ռիսկեր և ձեռնարկատիրական գործունեություն»: ԵՊՀ-ում գործում է նաև ձեռներեցության զարգացման կենտրոնը, որն իրականացնում է տարբեր ծրագրեր՝ աջակցելով ուսանողների նորարարական և ձեռնարկատիրական նախաձեռնություններին և նպաստելով նրանց համապատասխան կարողությունների զարգացմանը: Կենտրոնի կողմից իրականացվել են նաև սոցիալական ձեռներեցությանը առնչվող միջոցառումներ:

Գավառի պետական համալսարանում և Երևանի Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում 2017 թվականից իրականացվում է Եվրոպական միության «Էրասմուս+ ՍՄԱՐԹ» ծրագիրը, որը նպատակաուղղված է բուհերում ձեռնարկատիրական կրթության բարելավմանը: SMART ծրագիրը նպատակ ունի զարգացնել ուսանողների շրջանում ձեռնարկատիրական հմտությունները և աջակցել նրանց նորարարական գաղափարների իրականացմանն ու ձեռնարկատիրական ընկերությունների և համալսարանների միջև արդյունավետ համագործակցության ձևավորմանը: Ծրագրի ընդհանուր տևողությունը երեք տարի է (2017-2020) և այն իրականացվում է ՀՀ երեք քաղաքներում՝ Երևանում, Դիլիջանում և Գավառում: Ծրագրի շրջանակներում ակնկալվում է ստեղծել՝ 7 Սմարթ սրճարաններ (SMART Caffes (SCs)) և դրանց ցանց, բուհերում սովորողների ուսուցման համար մշակվել առնվազն 4 նոր դասընթաց, ՀԿ-ներում ներգրավված ուսանողների համար մշակել առնվազն 8 նոր ոչ ֆորմալ կրթական դասընթաց, ստեղծել IT բազմաֆունկցիոնալ պլատֆորմ SMART_CHANNEL, վերապատրաստել համապատասխան անձնակազմ և ուսանողների, կազմակերպել դասընթացներ, կազմակերպել Running EaPC- ի մրցակցության և ամենամյա տարածաշրջանային կոնֆերանս, մշակել և կիրառել գործիքակազմ, որը հնարավորություն կտա ապագայում երիտասարդներին ուղղորդելու դեպի ձեռնարկատիրական գործունեության:

Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի կողմից իրականացվում է «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության կրթական ծրագրերը բակալավրատի և մագիստրատուրայի համար, որոնք կառուցված են տնտեսագիտական մասնագիտական բլոկի առարկաներով:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի և **IAB Բիզնեսի միջազգային ակադեմիայի** կողմից ձեռնարկատիրական կրթության զարգացման շրջանակներում իրականացվում է «Երիտասարդների զարգացում» ծրագիրը, որի նպատակն է զարգացնել 18-30 տարեկան երիտասարդների ձեռնարկատիրական հմտությունները՝ ուղղորդելով նրանց գիտակից և տնտեսապես արդյունավետ զբաղվածություն: Ծրագրի տևողությունը 3 տարի է և իրականացվում է Շիրակի մարզում:

ՀՀ պետական կառավարման ակադեմիան մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում իրականացնում է Կառավարում՝ Գործարար վարչարարություն (MBA) կրթական ծրագրով ուսուցում՝ երկու տարի տևողությամբ: Բացի մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում իրականացվող Գործարար վարչարարություն (MBA) կրթական ծրագրից, ՀՀ պետական կառավարման ակադեմիան ՀՀ գիտությունների ազգային ակադեմայի հետ համատեղ իրականացնում է հեռավար ուսուցմամբ՝ 2.5 տարի տևողությամբ նույնանուն կրթական ծրագիր:

Երևանի «Գլաձոր» համալսարանի կողմից իրականացվում է «Ձեռնարկատիրական իրավունք» դասընթացը, որը նպատակն է ուսումնասիրել ձեռնարկատիրական և առևտրային գործունեություն իրականացնելու իրավական հիմնադրույթները և կարգը:

ԲԱԺԻՆ 2. «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՎԱԾ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

2.1 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՎԱԾ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՍՏ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Ձեռնարկատիրական կրթության ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ դասընթացը ուսանող աշակերտների ծնողների հետ, խորին հարցազրույցներ՝ ուսուցիչների և դպրոցի տնօրենների հետ, ինչպես նաև իրականացվել է անկետավորում աշակերտների շրջանում, որի արդյունքները ներկայացված է հաջորդ ենթաբաժնում:

Համաձայն ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ ֆոկուս խմբային քննարկման արդյունքների ՝ «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացում ներգրավված 2-3-րդ դասարանների աշակերտների ծնողները հիմնականում դրական վերաբերմունք ունեն «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի նկատմամբ և կարևորում են այս առարկայի ուսումնառությունը: Ծնողներն առանձնացրել են մի քանի ոլորտներ ըստ որոնց դասընթացն ունի դրական ազդեցություն: Մասնավորապես նրանք նշել են, որ առարկան օգնում է աշակերտների շրջանում **«փողի հանդեպ ճիշտ վերաբերմունք»** ձևավորվել և օգնում է, որ աշակերտները հասկանան **«փողի արժեքը»**: Մյուս կողմից, ծնողները նաև նշել են, որ երեխաները դարձել են ավելի խնայող, փորձում են առավել նպատակային ծախսել իրենց մոտ եղած գումարը, փորձում են հաշվարկել իրենց կողմից կատարված ծախսերը և որոշակի գումար կուտակել հետագա գնումներ կատարելու համար: Համաձայն ծնողների՝ դասընթացից հետո որևէ իր պատրաստելիս աշակերտները փորձում են հաշվարկել, թե որքան ծախսեր են կատարել առարկան պատրաստելու համար և ինչ արդյունք են ստացել:

«Ես մինչև այս առարկայի դասավանդումը մտածում էի, թե ինչպես փողի հանդեպ ճիշտ վերաբերմունք դաստիարակեմ, որ անընդհատ չասի՝ սա էլ եմ ուզում, նա էլ եմ ուզում, որ հասկանա դրա աշխատելու դժվարությունը»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

«Ինչ-որ տեղ նաև ուրախանում եմ, որ տղաս ուզում է ինչ-որ «ծառայություն» մատուցել, գործ անել, չարչարվել ու նոր դրա դիմաց գումար ակնկալել: Ամեն դեպքում երեխան սովորում է ինքն իր աշխատանքով ստեղծել իր գումարը»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

«Զարմանում եմ, թե ինչպես է աղջիկս այդքան տնտեսող դարձել: 100 դրամ եմ տալիս ամեն օր, որ դպրոցի բուֆետից կարկանդակ գնի, ուտի: Կարկանադակը 80 դրամ է, մնացած 20 դրամները հավաքում է: Չգիտեմ՝ ինչ հոգեբանություն է, որ ինքը մտածում է՝ միշտ պիտի ինքը պահած գումար ունենա»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

Հաջորդ դրական կողմը, որ ծնողները շեշտադրում են դասընթացի հետ կապված, վերաբերում է ապագա մասնագիտության ընտրությանը, քանի որ դասընթացի ներդրումից հետո աշակերտները սկսել են մտածել իրենց ապագա մասնագիտության ընտրության վերաբերյալ և փորձում են առավել լավ ծանոթանալ գոյություն ունեցող մասնագիտություններին: Համաձայն ծնողների՝ նրանցից շատերը ցանկություն են հայտնում դառնալ ձեռնարկատեր կամ ապագայում ունենալ սեփական բիզնես: Աշակերտները հետաքրքրություն են ցուցաբերում տարբեր գործող բիզնեսների նկատմամբ, փորձում են հասկանալ, թե ինչպես են գործում այդ բիզնեսները (օրինակ՝ վարսավիրանոց, խանութ), իսկ որոշ ծնողներ նաև նշել են, որ աշակերտները սկսել են «խորհուրդներ տալ ծնողներին ընտանեկան բյուջեի ծախսման հետ կապված»:

«Այս առարկան կարող է շատ օգնել երեխաներին ապագա մասնագիտություն ընտրելու հարցում: Նրանք արդեն սկսում են մտածել այդ ուղղությամբ, տարբերակներ են քննարկում»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

«Առարկայի դասավանդման արդյունավետությունը չափից դուրս զգալի է: Արդեն մի քանի ամիս է, որ անցնում են, ու սկսել են լիովին այլ կերպ մտածել, այս տարիքից արդեն ապագա մասնագիտության մասին են մտածում, օգուտներն ու վնասները հաշվարկում: Արդեն գիտեն, որ գումար ունենալուց առաջ, նախ պետք է աշխատել, վաստակել, հետո՝ խնայել»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

Ավագ դպրոցներ աշակերտների ծնողները նույնպես դրական են գնահատել առարկայի ուսուցանումը դպրոցներում և նշել են, որ աշակերտները հետաքրքրվածությամբ են ուսանում այն: Միևնույն ժամանակ նրանք նշել են մի շարք գործոններ, որոնց առումով առարկան ունի դրական ազդեցություն, մասնավորպես նրանք նշել են, որ դասընթացն օգնում է աշակերտներին ապագա մասնագիտության կողմնորոշման հարցում, աշակերտները սկսել են առավել շրջահայաց ծախսել գումարները, և սկսել են ավելի լավ պատկերացնել ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ռիսկերը և դրական կողմերը:

«Ավելի շատ օգնում է ապագա մասնագիտության կողմնորոշման հարցում, մտածում են աշխատելու մասին, եթե նախկինում չէին մտածում բիզնեսի ձեռնարկատիրական ռիսկերի մասին, հիմա արդեն ռիսկերի մասին տեղեկացված են: Երեխաները դարձել են ավելի խնայող, շրջահայաց»

ավագ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

Համաձայն 2-3 դասարանների աշակերտների ծնողների՝ աշակերտները հետաքրքրություն են ցուցաբերում դասընթացի նկատմամբ և որոշակի ոգևորվածությամբ են սովորում այն: Ծնողները նշել են, որ առարկայի շրջանակներում դասավանդվող բոլոր թեմաներն էլ եղել են աշակերտների համար հասկանալի, մատչելի յուրացվել են և եղել են հետաքրքիր նրանց համար: Ընդհանուր առմամբ ծնողները բարձր են գնահատել դասընթացի արդյունավետությունը, միևնույն ժամանակ

շեշտադրով, որ դասընթացը լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի առաջացնում աշակերտների համար:

«Առարկան ծանրաբեռնող չէ ու, որպես նորություն, հետաքրքիր է, քանի որ մարդկանց առօրյա կյանքի, ապրելակերպի մասին է: Նյութը բավականին մատչելի է, շատ արագ են երեխաները հասկանում: Բացասական կողմ չունի կամ դեռևս չենք նկատել: Ամենակարևորն այն է, որ տանը տնային աշխատանք չունեն անելու, տեխնոլոգիայի ժամին ամեն ինչն արվում է դասարանում: Տանը պարտադրված դաս սովորելը լրացուցիչ անհանգստություն կլիներ երեխայի համար: Ազատ ձևով մատուցվող յուրաքանչյուր նյութ ավելի հեշտ է յուրացվում երեխայի կողմից»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

«Ցանկացած ոլորտ, ցանկացած նյութ, որը երեխայի մեջ դաստիարակում է ինչ-որ բանի մշակույթ, ողջունելի է միանշանակ: Այս առարկան սովորեցնում է ֆինանսի հետ ճիշտ վարվելու մշակույթ, ճիշտ ապրելակերպ կառուցելու և վարելու մշակույթ: Երեխան այս տարիքից պիտի գոնե նվազագույն գիտելիքներ ունենա, դրա համար այս առարկա իսկապես պետք է երեխաներին ընդհանուր զարգացած լինելու համար»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

Այնուամենայնիվ, 2-3 դասարանների աշակերտների որոշ ծնողներ հայտնել են որոշակի մտավախություններ կապված առարկայի ներդրման հետ: Ծնողները մասնավորապես նշել են, որ առարկայի դասավանդումը 2-րդ և 3-րդ դասաանների համար դեռևս վաղ է, քանի որ այդ տարիքի երեխաները դեռևս պատրաստ չեն ընկալել ձեռնարկատիրության գաղափարը: Նրանք առաջարկել են առարկայի դասավանդումն իրականացնել 7-րդ դասարանից սկսած:

«Ես լավ ընդունեցի այդ լուրը, որ երեխաներն անցնելու են ձեռնարկատիրություն, սակայն կարծում եմ , որ շուտ է 3-րդ դասարանի համար: Ինձ թվում է, որ իրենք դեռ պատրաստ չեն ձեռնարկատիրական գաղափարին: Իրենք միանգամից մտածում են ստեղծել մի բան, որից մեծ շահույթ կստանան, իրենք միանգամից մտածում եմ մեծ գումարներ վաստակելու մասին...»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

Ծնողների մյուս մտավախությունը կապված է աշակերտների կողմից իրենց պատրաստած առարկան վաճառելու հանգամանքի հետ: Ծնողների մի մասը դրական չի վերաբերում, որ աշակերտները ներգրավված են լինելու «վաճառքի» գործընթացում: Ծնողները մասնավորապես նշել են, որ առավել կգերադասեին, եթե աշակերտներն իրենց կողմից պատրաստած իրերը վաճառելու փոխարեն նվիրեին:

«Ես արգելել եմ իմ երեխային վաճառել, եթե կազմակերպություն լինի, որ կվերցնի իմ երեխայից եւ կվաճառի, կողմ եմ, սակայն ես կսահմանափակեմ իմ երեխային վաճառքների հարցում»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

«Դրական է, քանի որ երեխան հասկանում է գումարի արժեքը, բայց այս տարիքից երեխան չպիտի մտածի վաստակելու մասին, նա պետք է սովորի, այդ կողմից վատ է: Լավ է, որ ստեղծում են, բայց վատ է, որ պետք է վաճառեն, գումար վաստակելուն դեմ եմ»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

Ե՛վ 2-3-րդ, և՛ ավագ դասարանների աշակերտների ծնողները հիմնականում կողմ են արտահայտվել դասընթացի ընդլայնմանը, սակայն միևնույն ժամանակ նշել են, որ ցանկալի է, որ այն հավելյալ ծանրաբեռնվածություն չավելացնի աշակերտների համար, մասնավորապես չլինեն տնային առաջադրանքներ: Որպես «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի ընդլայնման ուղղություններ ծնողներն առաջարկել են այն ներդնել մաթեմատիկա, տեխնոլոգիա և հասարակագիտություն առարկաների մեջ: Համաձայն ծնողների առարկայի դասավանդումը կարող են իրականացնել տեխնոլոգիայի, մաթեմատիկայի, հասարակագիտության կամ բնագիտական առարկաների ուսուցիչները: Ծնողները նաև շեշտադրել են դիդակտիկ նյութերի առկայության կարևորությունը, ինչպես նաև առաջարկել են դասընթացում առավել շատ կիրառել խաղեր, նկարներ, անիմացիաներ, ինչի շնորհիվ աշակերտների կողմից դասավանդվող նյութի յուրացումն ավելի հեշտ կլինի:

«Միայն ցանկալի կլինի մեծ ծավալի նյութեր չլինեն, լրացուցիչ ծանրաբեռնվածություն չլինի երեխայի համար: Ուղղակի պիտի ժամերն այնքան լինեն, որ երեխան հիմնովին կարողանա յուրացնել առարկան, ուսուցիչը կարողանա իր ուզած արդյունքը ստանալ, իսկ այդ դեպքում շաբաթական 1 կամ 2 ժամը, կարծում եմ, քիչ է»

2-3-րդ դասարանների աշակերտի ծնող, ֆոկուս խմբային քննարկում

Ավագ դպրոցի աշակերտների ծնողները նույնպես շեշտադրել են, որ աշակերտների ծանրաբեռնվածությունը մեծ է և նոր թեմաների ներդրման դեպքում այն հնարավոր է արդյունավետ չլինի: Նոր թեմաների ներդրման դեպքում ծնողներն առաջարկել են այն իրականացնել ինտերակտիվ, խաղային մեթոդներով, առանց տնային հանձնարարությունների՝ նոր նյութի մատուցումը հնարավորինս իրականացնելով դասաժամի ընթացքում:

Համաձայն ուսուցիչների և դպրոցի տնօրենների հետ իրականացված խորին հարցազրույցների արդյունքների աշակերտների վերաբերմունքն այս դասընթացի նկատմամբ եղել է դրական: Ծնողները նույնպես ունեցել են դրական վերաբերմունք, թեև որոշ ծնողների շրջանում առկա են եղել որոշակի մտավախություններ առարկայի դասավադման հետ կապված: Հայաստանի պատանեկան նվաճումներ ՀԿ մարզային ներկայացուցիչները նույնպես նշել են, որ որոշ ծնողներ ունեցել են մտավախություններ կապված այն հանգամանքի հետ, որ դասընթացի շրջանակներում աշակերտները «վաստակելու են գումար», սակայն հետագայում նրանց վերաբերմունքը փոխվել է դեպի դրական: Համաձայն խորին հարցազրույցների արդյունքների աշակերտները ոգևորված և հետաքրքրված են դասընթացով: Համաձայն ուսուցիչների

դասընթացը կօգնի աշակերտներին ապագայում գեներացնել բիզնես գաղափարներ և իրականացնել դրանք, ինչպես նաև կօգնի աշակերտներին ապագա մասնագիտության ընտրության հարցում: Ուսուցիչները նաև շեշտել են, որ այս առարկայով հետաքրքրված են նաև ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները, ինչն ընդհանուր առմամբ ավելացրել է նրանց ընդգրկվածությունը կրթական պրոցեսում: Ըստ ուսուցիչների դասապրոցեսում հասավար ակտիվությամբ ներգրավված են բոլոր աշակերտները՝ անկախ նրանց առաջադիմությունից և դասընթացի շնորհիվ աշակերտների շրջանում ձևավորվում է դրական վերաբերմունք կրթության նկատմամբ: Աշակերտներին առավել հետաքրքիր է ապրանքների, ծառայությունների ստեղծման և բիզնես գաղափարների և խնայողությունների վերաբերյալ թեմաները, միևնույն ժամանակ աշակերտներն առավել դժվարանում են «առաջարկ և պահանջարկ», «բիզնես գաղափար, բիզնես պլան» թեմաների ուսուցման ընթացքում:

«Երեխաները դասապրոցեսում ներգրավվում են մեծ ոգևորությամբ ու ակտիվությամբ: Սիրով աշխատում են պլաստիրինով: Բոլոր թեմաներն ու դասերը հետաքրքրությամբ են լսում, դժվար թեմա կամ չսիրած թեմա չկա: Ամեն դեպքում, կարծում ենք, որ այս տարիքի երեխաների համար «Բիզնես գաղափար» թեման բարդ է, բիզնես պլան կազմելը դեռ իրենց հասու չէ»

խորին հարցազրույց հիմնական դպրոցի ՁԿ դասավանդող ուսուցչի հետ

«Հաճախ ծնողների հետ խոսելիս լսել եմ, որ երեխաների հետ միաժամանակ նրանք նույնպես ուսումնասիրում են ուսուցանվող նյութը և ավելի շատ գիտելիք են ստացել, իսկ երբ երեխաները պատմում են, զգում եմ, թե որքան են հետաքրքրված և որքան գիտակ են դարձել այս ուղղությամբ»

խորին հարցազրույց ավագ դպրոցի ՁԿ դասավանդող ուսուցչի հետ

«Ամենակարևորը որ երեխայի մոտ անձի ձևավորումա լինում կոլեկտիվիզմի զգացողություն է առաջանում այս առարկայի շրջանակներում: Նրանք ստանում են տեսական գիտելիքներ որ առօրյա կյանքում շատա պետք գալիս: Օրինակ իմ աշակերտները պահանջատեր են դարձել շատ տարբեր իրավիճակներում ՝ բանկում, խանութում և այլն, նրանք ավելի պաշտպանված են իրենց զգում որպես երկրի քաղաքացի»

խորին հարցազրույց ավագ դպրոցում ՁԿ դասավանդող ուսուցչի հետ

Դասընթացի նեդրման արդյունավետությունն ըստ կազմակերպչական գործոնի գնահատվել է դրական և՛ դպրոցի տնօրենների, և՛ առարկան դասավանդող ուսուցիչների կողմից: Ուսուցիչները դրական են գնահատել նաև դասընթացի ներդրման արդյունավետությունն ըստ բովանդակային-մասնագիտական և մանկավարժական գործոնների, նշելով, որ դասընթացի շրջանակներում ուսուցանվող նյութը եղել է ամբողջովին նոր և բովանդակային-մասնագիտական առումով հագեցած, իսկ մանկավարժական գործոնների առումով դասընթացի շրջանակներում կիրառում են նոր, ինտերակտիվ մեթոդներ:

«Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի շրջանակներում աշակերտներն իրականացնում են նաև գործնական աշխատանքներ: Գյումրու թիվ 1 վարժարանում, օրինակ, աշակերտներն արտադրում են չկրկնվող կաշվե զարդեր, Գյումրու թիվ 26 դպրոցում աշակերտներն արտադրում են հեռախոսների համար նախատեսված պատյաններ, որոնք ամրացվում են ձեռքին և հարմար են ֆիզիկական ակտիվությամբ զբաղված մարդկաց համար: Այսպիսի գործնական աշխատանքների ընթացքում աշակերտները մշտապես գեներացնում են նոր բիզնես գաղափարներ: Աշակերտներն իրականացնում են նաև աշակերտական ընկերակցության գրանցում, բաժնետոմսերի թողարկում և վաճառք:

«Դասընթացի շնորհիվ աշակերտներն արդեն հասկանում են, որ որևէ բան արտադրելիս պետք է ավելի մատչելի հումք ունենան, եթե հնարավոր է՝ վերամշակեն թափոնները, պետք է արտադրանքը որակով լինի: Հիմա օրինակ, տեխնոլոգիայի ուսուցչուհին 7-րդ դասարանի աշակերտների հետ խմորեղեն, տորթեր են թխում, պիցցա են պատրաստում, աղցաններ, հյութեր են պատրաստում և իրացնում՝ 5-6 հոգով: Բոլոր գործողությունները հաշվարկված են, այսինքն՝ իրենք հետագայում ձեռնարկատիրական գործունեության համար հաշվարկ անելու հմտություններ են ձեռք բերում»

Խորին հարցազրույց հիմնական դպրոցի տնօրենի հետ

Թեև ուսուցիչների և դպրոցի տնօրենների մի մասը նշել է, որ առկա ժամաքանակը բավարար չէ դասընթացի համար և ցանկալի կլիներ ավելացնել, սակայն մյուս մասի կարծիքով հավելյալ ժամերի ավելացումն արդյունավետ չի լինի, քանի որ կավելացնեի աշակերտների ծանրաբեռնվածությունը:

«Դասընթացի համար հատկացված ժամանակը, օրինակ՝ 10-րդ դասարանում 2 ժամ, 11-ում 1 ժամ է, որը կարծում եմ՝ քիչ է, մանավանդ եթե հոսքային դասարան է, ուստի ճիշտ կլինի ավելի խորացնել՝ կախված այն հանգամանքից, թե ինչպիսի վերջնարդյունք ենք ուզում տեսնել: Եթե նպատակը մակերեսային, թռուցիկ տեղեկացվածություն ապահովելն է, 1 ժամը բավական է, բայց եթե մենք ուզում ենք հասնել նրան, ինչին ձգտում ենք, ուրեմն պիտի ժամաքանակի ավելացման մասին մտածել»

Խորին հարցազրույց ավագ դպրոցի տնօրենի հետ

Դասընթացի արդյունավետության հետագա բարելավման համար ուսուցիչներն առաջարկել են ավելացնել ձեռնարկատիրական կրթությանը հատկացվող դասաժամերի քանակը, ուսուցիչներին տրամադրել լրացուցիչ նյութեր, ինչը կավելացներ դասագրքերի մատչելիությունը, վերապատրաստումների իրականացումից հետո բարելավել կազմակերպիչների հետ հետադարձ կապը, իրականացնել գործնական սեմինարներ, որոնց ընթացքում կկազմակերպվեին հանդիպումներ ձեռնարկատերերի, գործարար հատվածի ներկայացուցիչների հետ, կազմակերպել ուսուցողական այցեր Կենտրոնական բան կամ գործող ձեռնարկություններ: Նոր թեմաների ավելացման դեպքում ուսուցիչները և տնօրեններն առաջարկել են այն իրականացնել 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների համար: Առաջարկվել է նաև

աշակերտների կողմից գործնական դասերի ընթացքում իրականացվող բիզնես պրոյեկտների համար մշակել փոքր դրամաշնորհների տրամադրման մեխանիզմներ:

«Միայն գտնում եմ, որ պիտի հստակորեն որոշակի ժամաքանակ հատկացվի առարկային և ոչ թե դա թողնվի դպրոցի հայեցողությանը, այսինքն՝ առարկան պետք է մտնի ուսպլանի մեջ, հստակ ժամաքանակով, մասնագետների վերապատրաստման ու կայացման մասին ավելի լուրջ պետք է մտածել. դպրոց մուտք գործեն ոչ թե մանկավարժներ, ովքեր վերապատրաստվել են որպես այդպիսիք, որովհետև այս դեպքում հսկայական ջանքեր են անհրաժեշտ, որ մարդը յուրացնի այդ մասնագիտությունը, այլ ճիշտ կլինի հենց տվյալ մասնագետը դասավանդի առարկան:

Խորին հարցազրույց ավագ դպրոցի տնօրենի հետ

«Ուսուցիչները և, իհարկե, նաև երեխաները դասավանդելիս և դասավանդման նյութը յուրացնելիս ու գործնականում դա կիրառելիս ունենում են որոշակի օգնության կարիք՝ փոքր դրամաշնորհների ձևով կամ մեկ այլ ձևով իրենց կողմից նախաձեռնված «բիզնեսը» տեղից պոկելու համար, որովհետև այսօրվա դպրոցը չունի այնքան հնարավորություն, որ ինքը նախաձեռնի, իսկ ծնողներին դիմել ներդրման համար չեմ կարծում, որ ճիշտ է: Ես կարծում եմ, որ պրոֆեսիոնալ մակարդակով արդյունք ակնկալելու համար պետք է ինչ-որ օգնող օղակ, որը ֆինանսական ներդրումներ կկատարի, իսկ հետո նաև կպահանջի արդյունք»

Խորին հարցազրույց ավագ դպրոցի տնօրենի հետ

«Կարծում եմ սխալ է, որ 10-րդ դասարանում առարկան հասարակագիտության մեջ բաղադրիչ է: Կարծում եմ, այն պետք է դիտարկվի որպես առանձին առարկա, որովհետեւ այն հմտություն է զարգացնում: Եթե հաշվի առնենք, որ հասարակագիտությունը դասավանդում են պատմության ուսուցիչները, պետք է հասկանանք, թե որքան վերապատրաստում պետք է անցնի ուսուցիչը, որ կարրողանա ձեռնարկատիրություն դասավանդել: Ստացվում է ամեն ինչից մի քիչ, իսկ դա ոչինչ չի տա աշակերտին: Եթե դպրոցում հոսքային է , ապա պետք է առարկան բոլոր հոսքերն անցնեն»

Հայաստանի պատանեկան նվաճումներ ՀԿ մարզային ներկայացուցիչ

«ՁԵՌՆԱՐԿԱՒՏՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՋՈՂՎԱԾ ԲԻԶՆԵՍ ԴԵՊՔԵՐ[1]

ԵՐԵՎԱՆԻ ԱԼ. ՇԻՐԱՎԱՆԶԱՆԴԵԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 21 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Երևանի Ալ. Շիրավանզադեի անվան թիվ 21 հիմնական դպրոցի աշակերտների կողմից հիմնադրվել է «Արևի սերունդ» աշակերտական գործարար ընկերությունը: ԱԳԸ կողմից որպես արտադրանքի թողարկման թեմատիկա է ընտրվել երևանյան թեման, իսկ ԱԳԸ կողմից կարգախոս է ընտրվել «Երևանը մենք ենք» կարգախոսը: ԱԳԸ կողմից իրականացվում է շուկայի ուսումնասիրություն և պարզվում է, որ սպառողները հետաքրքրված են գնելու երևանյան թիմաներով լուսանկարներ և հուշանվերներ:

Արտադրանքի թողարկման շրջանակներում աշակերտները ստացել են Երևանյան թեմատիկայով լուսանկարներ և պատրաստել են շրջանակներ ու մագնիսներ, իրականացրել են արտադրանքի փաթեթավորում:

Արտադրանքի ինքնարժեքը տարբեր արտադրատեսակների համար կազմել է 500, 250 և 120 ՀՀԴ: Ընդհանուր առմամբ արտադրվել և իրացվել է 51 միավոր արտադրանք: Վաճառքից գոյացած ընդհանուր հասույթը կազմել է 33 330 ՀՀԴ, որից աշակերտական գործարար ընկերության շահույթը կազմել է 13 630 ՀՀԴ: ԱԳԸ կողմից ստացված ամբողջ շահույթն ուղղվել է ԿՍՊ շրջանակներում գործողությունների իրականացմանը:

ԿՍՊ շրջանակներում որպես հանրային գործողության ոլորտ ընտրվել է դպրոցի մարզադահլիճի մասնակի վերանորոգումը: ԿՍՊ շրջանակներում նախատեսված ծրագրի իրականացման համար ԱԳԸ-ն ստացել է դրամաշնորհ Հայաստանի պատանեկան նվաճումներ ՀԿ և դրամական ներդրում Աշակերտական հիմադրամի կողմից:

Հաշվետու ժամանակահատված՝ 01.09.2016 -31.09.2016	
Ցուցանիշի անվանումը	Հաշվետու տվյալներ
Արտադրանքի ինքնարժեքը	500, 250, 120 ՀՀԴ
Արտադրված և վաճառված արտադրանքի քանակությունը	51 միավոր
Վաճառքից գոյացած ընդհանուր հասույթը	33 330 ՀՀԴ
Վճարված դիվիդենտները	2200 ՀՀԴ
Վճարված աշխատավարձերը	7600 ՀՀԴ
Փոխհատուցված այլ ծախսեր	9900 ՀՀԴ
Աշակերտական գործարար ընկերության շահույթը	13 630 ՀՀԴ
ԿՍՊ փաթեթին հատկացված գումարի չափը	13 630 ՀՀԴ

«Արևի սերունդ» աշակերտական գործարար ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

[1] Այս մասում տեղեկատվությունը ներկայացվում է ըստ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից հրապարակված նյութերի

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ (ԲԱՍԵՆԻ) ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

«Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթություն» ծրագրի մեկնարկի շրջանակներում Շիրակի մարզի Մուսայելյանի միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել աշակերտական առաջին ժողովը, որի ընթացքում ձևավորվել է նախատեսված աշխատանքների իրականացման կայուն թիմ: Հիմնադրվել է «Առաջնորդներ» աշակերտական գործարար ընկերությունը: ԱԳԸ կողմից որպես կարգախոս է ընտրվել «Առաջնորդությունը կարգավիճակ չէ, այլ գործընթաց» կարգախոսը: Աշակերտների կողմից իրականացվել է շուկայի ուսումնասիրություն և որոշում է կայացվել իրականացնել պայուսակների արտադրություն: Որակյալ և դիմացկուն արտադրանք ստանալու նպատակով աշակերտները որոշում են կայացրել պայուսակների արտադրությունը կատարել կտորի հիմքով, իսկ որպես հումք ընտրել են հայկական տարազի զարդանախշերով կտորը: Արտադրանքի սպառողների շուկան սահմանվել է երիտասարդները և երեխաները: Արտադրանքի հիմնական իրացումը կատարվել է Երևանում հոկտեմբերի 15-ին տեղի ունեցած տոնավաճառի ընթացքում: Սահմանվել է արտադրանքի շուկայական գինը և ընդհանուր առմամբ իրականացված վաճառքների ծավալները եղել են գոհացուցիչ:

Ընդհանուր առմամբ ԱԳԸ կողմից արտադրված պայուսակների ինքնարժեքը կազմել է 2500 ՀՀԴ, իրացվել է 25 միավոր արտադրանք, վաճառքից գոյացած ընդհանուր հասույթը կազմել է 62 500 ՀՀԴ, որից ԱԳԸ շահույթը կազմել է 35 500 ՀՀԴ: Գոյացած ամբողջ հասույթը հատկացվել է ԿՍՊ փաթեթին:

ԿՍՊ շրջանակներում իրականացվող գործողությունների որոշման համար աշակերտները քննարկել են երկու տարբերակ և խորհրդակցել են դպրոցի տնօրենի և համայնքապետի հետ: Արդյունքում որոշվել է դպրոցամերձ տարածքը դարձնել բացօթյա մարզահրապարակ: ԿՍՊ շրջանակներում նախատեսված ծրագրի իրականացման համար ԱԳԸ-ն ստացել է դրամաշնորհ Հայաստանի պատանեկան նվաճումների կողմից, ինչպես նաև նվիրատվություններ գործընկերների և համայնքապետարանի կողմից: Արտադրված պայուսակներ տրամադրվել է նաև համայնքի մանկապարտեզի երեխաներին:

Հաշվետու ժամանակահատված՝ 01.09.2016 -31.09.2016	
Ցուցանիշի անվանումը	Հաշվետու տվյալներ
Արտադրանքի ինքնարժեքը	2500 ՀՀԴ
Արտադրված և վաճառված արտադրանքի քանակությունը	25 միավոր
Վաճառքից գոյացած ընդհանուր հասույթը	62 500 ՀՀԴ
Վճարված դիվիդենտները	27 000 ՀՀԴ
Վճարված աշխատավարձերը	0
Փոխհատուցված այլ ծախսեր	0
Աշակերտական գործարար ընկերության շահույթը	35 500 ՀՀԴ
ԿՍՊ փաթեթին հատկացված գումարի չափը	35 500 ՀՀԴ

«Առաջնորդներ» աշակերտական գործարար ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիրի աշակերտների կողմից հիմնադրված «Արմաթ» ԱԳԸ-ն իր գործունեությունը սկսել է 2016 թ. սեպտեմբերից: ԱԳԸ անդամների կողմից իրականացվել է շուկայի ուսումնասիրություն՝ թիրախային խումբ սահմանելով 10-17 տարեկան աշակերտներին, որի արդյունքում պարզվել է, որ նրանք հետաքրքրված են նորաձև հեռախոսների պատյաններով: Հաշվի առնելով, որ դպրոցում առկա է 3D տպիչ և որի միջոցով հնարավոր է արտադրանք թողարկել, ԱԳԸ-ն սկսում է ընդունել անհատական պատվերներ և արտադրել հեռախոսների պատյաններ: ԱԳԸ-ն կարողանում է նախատեսվածից ավելի շատ արտադրանք արտադրել և սպառել, ինչպես նաև մասնակցում է Երևանում հոկտեմբերի 15-ին տեղի ունեցած տոնավաճառին, որի շրջանակներում կարողանում է իրացնել 30 միավոր արտադրանք:

Արտադրանքի ինքնարժեքը տարբեր արտադրատեսակների համար կազմել է 1000 և 1500 ՀՀԴ: ԸՆդհանուր առմամբ արտադրվել և իրացվել է 50 միավոր արտադրանք: Վաճառքից գոյացած ընդհանուր հասույթը կազմել է 70 000 ՀՀԴ, որից աշակերտական գործարար ընկերության շահույթը կազմել է 50 000 ՀՀԴ: ԱԳԸ կողմից ստացված ամբողջ շահույթ ուղղվել է ԿՍՊ շրջանակներում գործողությունների իրականացմանը:

Հանրային գործունեության շրջանակներում աշակերտները հիմնում են ԱՀԿ, որը որպես համայնքային հիմնախնդիր ընտրում է դպրոցի տարածքում մարզահրապարակի կառուցումը՝ ֆուտբոլ, վալեյբոլ և բասկետբոլ խաղալու համար:

ԿՍՊ շրջանակներում նախատեսված ծրագրի իրականացման համար ԱԳԸ-ն ստացել է դրամաշնորհ Հայաստանի պատանեկան նվաճումներ ՀԿ կողմից, դրամային ներդրումներ համայնքապետարանի և Վարդենիկի կրթահամալիրի կողմից:

Հաշվետու ժամանակահատված՝ 01.09.2016 -31.09.2016	
Ցուցանիշի անվանումը	Հաշվետու տվյալներ
Արտադրանքի ինքնարժեքը	1000 ՀՀԴ և 1500 ՀՀԴ
Արտադրված և վաճառված արտադրանքի քանակությունը	50 միավոր
Վաճառքից գոյացած ընդհանուր հասույթը	70 000 ՀՀԴ
Վճարված դիվիդենտները	5000 ՀՀԴ
Վճարված աշխատավարձերը	5000 ՀՀԴ
Փոխհատուցված այլ ծախսեր	10 000 ՀՀԴ
Աշակերտական գործարար ընկերության շահույթը	50 000 ՀՀԴ
ԿՍՊ փաթեթին հատկացված գումարի չափը	50 000 ՀՀԴ

«Արմաթ» աշակերտական գործարար ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2.2 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ

«Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի իրականացման համար վերապատրաստումներ են անցել բարձր դասարանի մաթեմատիկայի, հասարակագիտության ուսուցիչները, տեխնոլոգիայի ուսուցիչներն ու դասվարները: Վերապատրաստումներն իրականացվել են «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ կողմից «վերապատրաստումներ վերապատրաստողների համար» ձևաչափով (ToT): Տեխնոլոգիա առարկայի ուսուցիչները մասնակցել են 2-ից մեկ շաբաթյա վերապատրաստման դասընթացների, իսկ դասվարները՝ երկօրյա դասընթացների: Ուսուցիչների ընտրությունը իրականացվել է Կրթության ազգային ինստիտուտի կողմից: Ընդհանուր առմամբ վերապատրաստումները կրել են պարբերական բնույթ:

Ուսուցիչները և դպրոցների տնօրենները դրական են գնահատել վերապատրաստումների արդյունավետությունը: Ուսուցիչները հիմնականում իրենց գիտելիքները և հմտությունները գնահատել են բավարար դասընթացի արդյունավետ կազմակերպումն իրականացնելու համար՝ նշելով, որ դասի նյութի սահմաններում տիրապետում են թեմային, սակայն միևնույն ժամանակ կցանկանային ընդլայնել իրենց գիտելիքներն այս ոլորտում: Որոշ ուսուցիչներ նշել են, որ դասընթացների սկզբում դժվարություններ են ունեցել նյութի յուրացման հետ կապված, սակայն հետագայում կարողացել են հաղթահարել այն մեթոդական ձեռնարկների միջոցով: Որոշ տնօրեններ առաջարկել են նաև ուժեղացնել վերապատրաստման դասընթացներից հետո ուսուցիչների հետ հետադարձ կապը, ինչպես նաև վերապատրաստումների իրականացման համար ներգրավել հենց տնտեսագիտության մեջ մասնագիտացած վերապատրաստողների:

> **«Հատուկ դիտարկումներ չեմ արել, բայց ուսուցիչների հետ զրուցից տեղեկացել եմ, որ սկզբում դժվարանում էին, չէին կարողանում, լավ կլիներ վերապատրաստումն իրականացվեր հատուկ մասնագետների կողմից: Հետագայում ուսուցիչները սկսեցին աշխատել, նյութեր ունեցան ձեռքի տակ, արդեն ուրիշ կերպ նայեցին հարցին»**
>
> Հիմնական դպրոցի տնօրենի հետ խորին հարցազրույց

Ընդհանուր առմամբ, ուսուցիչները և տնօրեններն արդյունավետ են գնահատել դասընթացի ներառումը հենց «Տեխնոլոգիա» առարկայի մեջ 2-3-րդ դասարանների համար: Որպես այլընտրանքային տարբերակ նշել են, որ դասընթացը կարող էր ներգրավված լինել նաև «Ես և շրջակա աշխարհը» առարկայում: Տնօրենների և ուսուցիչների մի մասը նշում է, որ ավագ դասարաններում առավել արդյունավետ կլիներ, եթե այս առարկայի համար վերապատրաստումներ անցնեին մաթեմատիկայի ուսուցիչները, այն դեպքում երբ տնտեսագիտություն առարկայի դասավանդում չի իրականացվում դպրոցում: Ավագ դասարանների համար ուսուցիչները համարում են, որ ձեռնարկատիրական կրթություն առարկան պետք է ներառվի հենց հասարակագիտություն առարկայի մեջ:

Ինչ վերաբերում է **դասընթացի անցկացման մեթոդներին**, ապա ուսուցիչները նշել են, որ հիմնականում կիրառում են ինտերակտիվ, խաղային մեթոդներ: Ուսուցիչները նաև նշել են, որ դասընթացը կազմակերպելու համար հաճախ են կիրառում պրոյեկտորներ, պլանշետներ և

կարևորել են նոր տեխնոլոգիաների կիրառությունը դասընթացի արդյունավետության բարձրացման համար:

«Կիրառել եմ բազում մեթոդներ: Դասաժամը միշտ լի է քննարկումներով, հարցումներով, լինում են խմբակային աշխատանքներ խաղի տեսքով, որոնք ավելի մեծ հետաքրքրություն և ոգևորություն է փոխանցում աշակերտին»

խորին հարցազրույց ավագ դպրոցի ՁԿ դասավանդող ուսուցչի հետ

«Դասավանդման խմբային և խաղային մեթոդներն են առավել արդյունավետ: Սիրում են և հեշտությամբ խաղում են բոլոր խաղերը, առավել շատ՝ դերային խաղերը: Դժվարություն չեմ կարող ասել, բայց խնդիրները լուծելուց առաջ փորձում ենք վերլուծել այն, նոր առաջ անցնել»

խորին հարցազրույց հիմնական դպրոցի ՁԿ դասավանդող ուսուցչի հետ

«Դասը միշտ սկսում ենք հարց ու պատասխանով, խաղային՝ կառուսել տարբերակով, խաչբառ ենք կազմում, իրենք նույնպես: Համակարգչային ԿԱՀՈՒ ծրագիրն ենք շատ ենք օգտագործում, հենց մրցակցությունն է իրենց դուր գալիս: Ներկայացում մեթոդով ենք աշխատում, նաև հետաքրքիր տեսանյութեր ենք նայում, դա ավելի է ամրապնդում իրենց գիտելիքը: Վերջում փորձում ենք խնդիր լուծել, եթե չենք հասցնում, հաջորդ դասին ենք ամրապնդում գիտելիքը խնդրի լուծման մեթոդով»

խորին հարցազրույց հիմնական դպրոցի ՁԿ դասավանդող ուսուցչի հետ

Համաձայն **2-րդ և 3-րդ դասարաններում իրականացված դասալսումների** արդյունքների՝ դասերն ունեցել են հստակ սահմանված նպատակներ և դասի կառուցվածքը և բովանդակությունն ուղղված է եղել այդ նպատակների իրականացմանը: «Ձեռնարկատիրական կրթություն» ինտեգրված մասի համատեքստում ուսուցիչները կարողացել են տեխնոլոգիայի թեմաները կապել ձեռնարկատիրության հետ այնպես, որ դա հասկանալի և մատչելի լինի աշակերտների համար: Դասերի ընթացքում ուսուցիչներն առանձնահատուկ ուշադրություն են դարձրել «փոխօգնության» գաղափարին, աշխատանքում նյութերը խնայողաբար օգտագործելու հմտություններին, աշխատանքի պլանավորմանը և գործնական աշխատանքների իրականացման ընթացքում համագործակցությանը:

2-րդ և 3-րդ դասարաններում դասերի կազմակերպման համար կիրառվել են հետևյալ մեթոդները. դասաժամի ընթացքում աշակերտներն իրականացրել են առակի բեմականացում և դերային խաղ, ծավալվել է քննարկում բեմադրված առակի շուրջ, աշակերտները գունավոր թղթերով գունավորել են գծանկարներ, տեղի է ունեցել հարց ու պատասխան: Աշակերտները հաշվարկել են նաև իրենց կողմից պատրաստված իրերի համար ծախսված նյութերի արժեքը: Դասերից մեկի ավարտին կազմակերպվել է նաև տոնավաճառ, որի ընթացքում աշակերտները կարողացել են ըստ իրենց կողմից կատարված հաշվարկների սահմանել վաճառվող ապրանքների գները:

Ընդհանուր առմամբ, համաձայն դասալսումների արդյունքների աշակերտների ներգրավվածությունը, հարցերին պատասխանելու ցանկությունը և ակտիվությունը եղել է

բարձր: Ուսուցիչները կարողացել են խրախուսել աշակերտներին և վերջիններս առավելապես ներգրավված ու հետաքրքրված են եղել գործնական աշխատանքների ընթացքում: Աշակերտները կարողացել են ազատորեն արտահայտել իրենց սեփական մտքերը, ինչն էլ խրախուսվել է ուսուցիչների կողմից: Գործնական աշխատանքների ընթացքում ուսուցիչները տվել են ընդհանուր հանձնարարություններ բոլոր աշակերտներին և դժվարություններ առաջանալու դեպքում աշխատել են նրանց հետ առանձին-առանձին:

Համաձայն **ավագ դասարաններում իրականացված դասալսումների** արդյունքների՝ դասերն ունեցել են հստակ սահմանված նպատակներ, որոնց համապատասխան էլ իրականացվել են ուսումնական գործողությունները: Դասերի ընթացքում ներկայացվել է ինչպես նոր նյութը, այնպես էլ հարցուպատասխանի միջոցով ամփոփվել են նախորդ դասերը: Դիտարկված դասերի ընթացքում ուսուցիչներն ակտիվորեն կիրառել են անհատական և համագործակցային մեթոդներ՝ հիմնվելով ինչպես աշակերտ-ուսուցիչ, այնպես էլ աշակերտ-աշակերտ համագործակցության վրա: Աշակերտները գրեթե հասավար չափով ընդգրկված են եղել դասապրոցեսի մեջ, ուսուցիչները մշտապես խրախուսել են բոլոր աշակերտների մասնակցությունը, ինչպես նաև խրախուսել են առավել ակտիվ աշակերտներին դասապրոցեսում ներգրավել առավել պասիվներին, ինչն ընդհանուր առմամբ արդյունավետ է եղել: Ընդհանուր առմամբ աշակերտները հնարավորություն են ունեցել ազատ արտահայտել իրենց կարծիքը այս կամ այն հարցի շուրջ:

Դասերի ընթացքում աշակերտները ներկայացրել են իրենց թեմաները «Power Point» ներկայացման միջոցով, պատասխանել են ուսուցիչների հարցերին: Նյութի ներկայացման համար աշակերտներն օգտվել են և՛ տպագիր նյութերից, և՛ էլեկտրոնային այլ աղբյուրներից՝ համակարգչից և պրոյեկտորից: Դասերից մեկի ընթացքում ցուցադրվել են աշակերտական խմբի աշխատանքային գործընթացներից տարբեր ժամանակներում արված լուսանկարներ, ձեռագործ աշխատանքների լուսանկարներ և այլն:

Դասերի ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները. հարց ու պատասխան, դերային խաղ, խաղ «կարուսել», խաչբառի լուծում, «Power Point» ներկայացում, խմբային մեթոդով խնդիրների լուծում, հարցուպատասխան-խաղ էլեկտրոնային եղանակով, որի ընթացքում աշակերտները գրանցվել են ծրագրում և իրենց հեռախոսներով պատասխանել են հարցերին, իսկ ստացված արդյունքներն անմիջապես հայտվել են էկրանին: Այս խաղին աշակերտները մասնակցել են ինչպես անհատական, այնպես էլ խմբերով: Ընդհանուր առմամբ կիրառված խաղերը եղել են արդյունավետ, քանի որ ստեղծված մրցակցային մթնոլորտի պայմաններում աշակերտները ակտիվորեն և հետաքրքրված մասնակցել են այդ խաղերին, ինչպես նաև արդյունավետ աշխատել են իրենց խմբերում:

Համաձայն դիտարկման արդյունքների՝ կիրառված բոլոր մեթոդներն էլ եղել են արդյունավետ: Էլեկտրոնային եղանակով հարցուպատասխան մրցույթի անցկացումը նույնպես եղել է բավականին արդյունավետ, քանի որ հնարավորություն է տվել ինչպես կրկնել և ամրապնդել անցած նյութը, այնպես էլ դասաժամը դարձրել է առավել դինամիկ և հետաքրքիր: Տպագիր և էլեկտրոնային նյութերի կիրառությունը գիտելիքների փոխանցման ու ներկայացման տեսանկյունից նույնպես եղել են օգտակար, քանի որ այդ կերպ աշակերտները կարողացել են

հերթով անդրադառնալ բոլոր կարևոր կետերին՝ խուսափելով մոռանալու կամ շփոթվելու ռիսկից: Անընդհատ միմյանց շարունակելու, միմյանց լրացնելու, ուսուցչի կողմից խրախուսանքներ ստանալու շնորհիվ աշակերտները համարձակ արտահայտել են իրենց տեսակետները և բարձր է եղել դասապրոցեսին ընդգրկված լինելու ցանկությունը:

Այսպիսով, համաձայն ավագ դասարաններում իրականացված դասալսումների արդյունքների, ընդհանուր առմամբ աշակերտներին մատուցվող նյութը եղել է հեշտ և հասկանալի, բարձր է եղել աշակերտների ներգրավվածությունը, ակտիվությունը, հարցերին պատասխանելու և կարծիք արտահայտելու ցանկությունը: Աշակերտներն առավելապես ներգրավված ու հետաքրքրված էին հարց ու պատասխանների և օնլայն խաղերի ընթացքում:

Ձեռնարկատիրական կրթություն առարկան ուսանող 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների շրջանում իրականացվել է անկետավորում, որի շրջանակներում առաջարկվել է վերջիններիս գնահատել, թե այս դասընթացի ընթացքում կիրառվող որ մեթոդներն են եղել առավել արդյունավետ: Առավել քիչ թվով աշակերտներ են նշել, որ դասերի ընթացքում կիրառվում է «Power point» ներկայացման մեթոդը, իսկ թվարկված մյուս մեթոդներից բոլոր համար տրվել են դրական պատասխաններ: Համաձայն գնահատման արդյունքների աշակերտներն առավել արդյունավետ են համարում բանավեճ-քննարկումների, խմբային քննարկումների և խմբային գործնական աշխատանքների իրականացման մեթոդները, իսկ համեմատաբար ոչ արդյունավետ աշխուժացնող խաղերի, վարժությունների մեթոդը (Գրաֆիկ 1):



Գրաֆիկ 1. Դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատումը ՁԿ դասընթացն ուսանող 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների կողմից

Ձեռնարկատիրական կրթություն առարկան չուսանող 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների շրջանում իրականացված անկետավորման համաձայն վերջիններս որպես իրենց դասերի կազամերպման առավել արդյունավետ մեթոդներ նշել են խմբային քննարկումների և բանավեճ-քննարկումների մեթոդները և համեմատաբար առավել ոչ արդյունավետ «Power point» ներկայացման մեթոդը (Գրաֆիկ 2):



Գրաֆիկ 2. Դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատումը ՁԿ դասընթացը չուսանող 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների կողմից

2.3 «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՎԱԾ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՍՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՆԿԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Ձեռնարկատիրական կրթություն առարկայի ազդեցության գնահատման համար 10-րդ և 11-րդ դասարանների աշակերտների շրջանում իրականացվել է անկետավորում: Կիրառվել է ազդեցության խմբի և ստուգիչ խմբի համեմատության մեթոդը: Ձևավորվել է ստուգիչ խումբ, որում ներառված են եղել համանման դպրոցների նույն դասարանների աշակերտներ, ովքեր սակայն չեն անցել «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացը: Ընդհանուր առմամբ անկետավորմանը ներգրավվել են 110-ական աշակերտներ ազդեցության և ստուգիչ խմբերից յուրաքանչյուրում, որոնց կազմում անկետավորմանը մասնակցած աշակերտների 43%-ը եղել է արական սեռի ներկայացուցիչներ, 57%-ը՝ իգական:

«Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի ազդեցության գնահատումն իրականացվել է երեք բաղադրիչներով՝ կոգնիտիվ (գիտելիք, կարողություններ և հմտություններ), աֆֆեկտիվ (վերաբերմունք, դիրքորոշումներ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նկատմամբ) և վարքային (փոփոխություններ, որոնք նպաստել են, որ աշակերտները սեփական նախաձեռնությամբ զբաղվեն ձեռնարկատիրական գործունեությամբ): Ըստ առանձին բաղադրիչների գնահատման արդյունքները ներկայացված է ստորև:

Կոգնիտիվ բաղադրիչ: Համաձայն «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան ուսանող աշակերտների շրջանում իրականացված անկետավորման արդյունքների՝ անկետավորմանը մասնակցած աշակերտների 63%-ը դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում առարկան ուսանել են մինչև 6 ամիս, 14%-ը՝ 6 ամսից ավել, սակայն ոչ ավել քան մեկ տարի, իսկ 23%-ը՝ մեկ տարուց ավել: Անկետավորմանը մասնակցած աշակերտների հիմնական մասը համաձայնել է այն մտքի հետ, որ ՁԿ դասընթացը հետաքրքիր է և իրենց տալիս է օգտակար գիտելիքներ և հմտություններ: Հարցմանը մասնակցած աշակերտների 63%-ը նշել է, որ դասընթացը ամբողջովին հետաքրքիր է իրենց համար, 20%-ը՝ ավելի շուտ հետաքրքիր է և միայն 5%-ն է նշել, որ դասընթացն իրենց համար հետաքրքիր չէ: Ինչ վերաբերում է դասընթացի շնորհիվ օգտակար գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելուն, ապա անկետավորմանը մասնակցած աշակերտները հիմնականում նշել են, որ դասընթացը տալիս է օգտակար գիտելիքներ և հմտություններ և այս առումով բացասական պատասխաններ չեն հնչել: Անկետավորմանը մասնակցած աշակերտների հիմնական մասը նաև համաձայնել է այն մտքի հետ, որ դասընթացի ընթացքում ձեռք բերած գիտելիքները ամենայն հավանականությամբ կկիրառի ապագայում (Գրաֆիկ 3):



Գրաֆիկ 3. ԶԿ դասընթացի գնահատումը առարկան ուսանող աշակերտների կողմից

Աշակերտներին նաև առաջարկվել է գնահատել, թե վերջիններս որքանով են տիրապետում ԶԿ դասընթացում ներառված թեմաներին և արդյունքները համեմատվել են ստուգիչ խմբի արդյունքների հետ: Գնահատումն իրականացվել է 1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է, որ աշակերտի գիտելիքները և կարողությունները տվյալ թեմայի հետ կապված ընդհանրապես բավարար չեն, 5-ը՝ լիովին բավարար են: Ըստ ինքնագնահատման արդյունքների՝ աշակերտները հիմնականում տարբեր թեմաների հետ կապված իրենց գիտելիքները և հմտությունները գնահատել են միջինից բարձր: Աշակերտների կողմից հատկապես բարձր են գնահատվել «շուկայի հետազոտություն», «վաճառքի կազմակերպում, գովազդ», «արտադրության կազմակերպում» թեմաների հետ կապված աշակերտների գիտելիքները և հմտությունները և, ի հակադրություն, համեմատաբար ավելի ցածր են գնահատվել «փաստաթղթավարություն» և «կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» թեմաները: Ընդհանուր առմամբ ստուգիչ խմբի հետ համեմատ նկատելի է, որ ազդեցության խմբում տրված գնահատականներն առավել բարձր են (Գրաֆիկ 4):



Գրաֆիկ 4. ՁԿ դասընթացում ներառված թեմաների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների գնահատումն աշակերտների կողմից ազդեցության և ստուգիչ խմբերի դեպքում

Այսպիսով, անկետավորմանը մասնակցած աշակերտների հիմնական մասը դրական է վերաբերում «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացին, այն համարում է հետաքրքիր և օգտակար, իսկ ստացած գիտելիքները և հմտությունները՝ կիրառելի: Ընդհանուր առմամբ ՁԿ դասընթացում ներառված տարբեր թեմաների վերաբերյալ գիտելիքները և հմտությունները աշակերտները գնահատել են միջինից բարձր:

ԱՖՖԵԿՏԻՎ ԲԱՂԱԴՐԻՉ: Աֆֆեկտիվ բաղադրիչի դեպքում գնահատվել է «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացը ուսանող աշակերտների վերաբերմունքը ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ, ինչի համար աշակերտներին առաջարկվել է 1-ից 5 բալանոց սանդղակով գնահատել, թե վերջիններս որքանով են համաձայն ներկայացված դատողությունների հետ, որտեղ 1-ը նշանակում է, որ ընդհանրապես համաձայն չեն, 5-ը՝ լիովին համաձայն են տվյալ դատողության հետ: Այնուհետև միջինների համեմատության վիճակագրական տեստի միջոցով ազդեցության խմբի արդյունքները համեմատվել է ստուգիչ խմբի արդյունքների հետ: Արդյունքում պարզվել է, որ որոշակի փոփոխականների դեպքում այս երկու խմբերի միջև առկա են վիճակագրորեն նշանակալի տարբերություններ: Մասնավորապես, վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են առկա հետևյալ փոփոխականների դեպքում՝ «Ես դրական եմ վերաբերում ձեռնարկատիրական գործունեությանը» (ազդեցության խմբի միջինը՝ 4.49, ստուգիչ խմբի միջինը՝ 4.1), «ձեռներեցությամբ զբաղվելով հնարավոր է «լավ ապրել»» (ազդեցության խմբի միջինը՝ 4.23, ստուգիչ խմբի միջինը՝ 4.014), «ձեռներեցը պետք է

ունենա բնավորության բացասական գծեր հաջողության հասնելու համար (օրինակ խորամանկություն, խաբելու ունակություն և այլն)» (ազդեցության խմբի միջինը՝ 2.38, ստուգիչ խմբի միջինը՝ 3.3), «հաջողակ ձեռներեց հնարավոր է դառնալ միայն ոչ ազնիվ ճանապարհներով» (ազդեցության խմբի միջինը՝ 1.817, ստուգիչ խմբի միջինը՝ 2.28): Վիճակագրորեն նշանակալի տարբերություն չի բացահայտվել միայն մեկ փոփոխականի դեպքում՝ «ապագայում ես ցանկանում եմ դառնալ ձեռներեց» (ազդեցության խմբի միջինը՝ 3.437, ստուգիչ խմբի միջինը՝ 3.62) (Աղյուսակ 1): Ելնելով այս արդյունքներից՝ կարող ենք եզրակացնել, որ ՁԿ դասընթացն ունեցել է որոշակի ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ աշակերտների շրջանում դրական վերաբերմունքի ձևավորման հարցում, ինչն արտահայտվում է ՁԿ դասընթացն ուսանող աշակերտների շրջանում ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ առավել դրական վերաբերմունքով՝ ի տարբերություն ՁԿ դասընթացը չուսանող ստուգիչ խմբի:

Դատողություններ	Միջինը ստուգիչ խմբի դեպքում	Միջինը ազդեցության խմբի դեպքում	Վիճակագրական տեստի արդյունքը
Ես դրական եմ վերաբերվում ձեռնարկատիրական գործունեությանը	4.1	4.49	Միջինների համեմատության վիճակագրական տեստը ցույց է տվել նշանակալի տարբերություն ազդեցության և ստուգիչ խմբերի համար
Ապագայում ես ցանկանում եմ դառնալ ձեռներեց	3.437	3.62	Միջինների համեմատության վիճակագրական տեստը չի բացահայտել նշանակալի տարբերություն ազդեցության և ստուգիչ խմբերի համար
Ձեռներեցությամբ զբաղվելով հնարավոր է «լավ ապրել»	4.014	4.23	Միջինների համեմատության վիճակագրական տեստը ցույց է տվել նշանակալի տարբերություն ազդեցության և ստուգիչ խմբերի համար
Ձեռներեցը պետք է ունենա բնավորության բացասական գծեր հաջողության հասնելու համար	3.3	2.38	Միջինների համեմատության վիճակագրական տեստը ցույց է տվել նշանակալի տարբերություն ազդեցության և ստուգիչ խմբերի համար
Հաջողակ ձեռներեց հնարավոր է դառնալ միայն ոչ ազնիվ ճանապարհներով	2.28	1.817	Միջինների համեմատության վիճակագրական տեստը ցույց է տվել նշանակալի տարբերություն ազդեցության և ստուգիչ խմբերի համար

Աղյուսակ 1. Ազդեցության և ստուգիչ խմբի համեմատությունն ըստ աֆֆեկտիվ բաղադրիչի

Վարքային բաղադրիչ: Վարքային բաղադրիչի դեպքում գնահատվել է, թե որքանով են ՁԿ դասընթացն ուսանող աշակերտները նախաձեռնել և իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն (որը կարող է լինել փոքր ակտիվություն, ինչպես օրինակ որևէ իր պատրաստել և վաճառել, կազմակերպել առցանց վաճառքներ և այլն): Արդյունքում, ազդեցության խմբում

անկետավորմանը մասնակցած աշակերտների 18%-ը նշել է, որ վերջին մեկ տարվա ընթացքում իրականացրել են որևէ բիզնես ծրագիր դպրոցական ծրագրի շրջանակներում՝ խմբային կամ անհատական: Գավառի ավագ դպրոցում օրինակ աշակերտները հավաքել են թղթի թափոնները, հանձնել են վերամշակման և ստացած գումարն ուղղել են դպրոցի կարիքների լուծմանը, Երևանի թիվ 105 դպրոցում իրականացրել են ամանորյա իրերի վաճառք և ստացված հասույթն ուղղել են բարեգործությանը, իսկ Գյումրում թիվ 1 վարժարանում աշակերտներն իրականացրել են կաշվե իրերի արտադրություն: Ստուգիչ խմբում դպրոցական ծրագրի շրջանակներում բիզնես ծրագիր իրականացրել են անկետավորմանը մասնակցած աշակերտների 10%-ը:

Հարցին՝ թե արդյոք վերջին մեկ տարվա ընթացքում ունեցել եք որևէ բիզնես մտահղացում, իրականացրել եք որևէ բիզնես ծրագիր կամ գործողություն ձեր սեփական նախաձեռնությամբ, ազդեցության խմբում անկետավորմանը մասնակցած աշակերտների 34%-ը նշել է, որ ունի բիզնես գաղափար, 9%-ը՝ բիզնես գաղափարով կիսվել է ընկերների հետ և պլանավորում են սկսել, 5%-ն իրականացրել է կոնկրետ քայլեր ուղղված բիզնես գաղափարի իրականացմանը, իսկ 6%-ի բիզնեսը տվյալ պահին եղել է գործող: Գրեթե նմանատիպ պատկեր է արձանագրվել նաև ստուգիչ խմբում: Ազդեցության կամ ստուգիչ խմբերում աշակերտների շուրջ 50%-ը չունի որևէ բիզնես գաղափար և չի ծավալում որևէ բիզնես գործողություն: Աշակերտները հիմնականում փորձել են իրականացնել համացանցում իրերի առցանց վաճառքի կամ ձեռքի արտադրանքի պատրաստման և վաճառման աշխատանքներ: Այն աշակերտները, ովքեր բիզնես գործունեության արդյունքում ստացել են որոշակի եկամուտ հիմնականում նշել են եկամուտի ծախսման երկու ուղղություն՝ կա՛մ ներդրել են նորից բիզնեսի մեջ, կա՛մ բարեգործություն են իրականացրել (Գրաֆիկ 5):



Գրաֆիկ 5. Բիզնես գաղափարների առկայությունը և իրականացումը աշակերտների շրջանում

ԲԱԺԻՆ 3: «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱՂԱԴՐԻՉԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

3.1 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ» ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ

Հետազոտության «Սոցիալական ձեռնարկատիրության ներդրման հնարավորությունը» բաղադրիչի շրջանակներում իրականացվել է «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի համար նախատեսված դասագրքերի, այլ առարկաների դասագրքերում ինտեգրված հատվածների և դասընթացի վերաբերյալ մեթոդական ձեռնարկների վերլուծություն, որի նպատակն էր բացահայտել, թե որքանով են առկա փաստաթղթերն անդրադառնում սոցիալական ձեռնարկատիրությանը, իսկ ուղղակի անդրադարձ չլինելու դեպքում պարզել, թե որքանով են դասավանդվող թեմաներն արտացոլում սոցիալական ձեռնարկատիրության հղանցքի բաղադրիչները և սկզբունքային տարրերը:

Ընդհանուր առմամբ վերլուծության հիմնական նպատակն է եղել ստանալ հետևյալ հարցերի պատասխանները՝

- Արդյո՞ք ուսումնասիրության ենթակա փաստաթղթերում անդրադարձ է կատարվում սոցիալական ձեռնարկատիրությանը որպես առանձին հասկացության/կոնցեպտի:
- Արդյո՞ք «սոցիալական ձեռնարկատիրություն» թեման ներառված է «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացում, եթե այո, ապա որքան ժամաքանակով:
- Որքանո՞վ են սոցիալական ձեռնարկատիրության սկզբունքային տարրերը և գաղափարները ներդրված դասընթացում:

Կիրառվել է փաստաթղթերի որակական վերլուծության մեթոդը, ինչի համար առանձնացվել են այն կատեգորիաները, որոնց շուրջ կառուցվել է վերլուծությունը: Որպես վերլուծական կատեգորիաներ առանձնացվել են այն առավել ընդհանրական ոլորտները, որոնք կապված են «սոցիալական ձեռնարկատիրության» հասկացության հետ՝ այն հակադրելով «շահույթ հետապնդելու նպատակով իրականացվող ձեռնարկատիրությանը»:

Վերլուծական կատեգորիաների առանձնացման համար նեկայացնենք, թե ինչ բնութագրիչներով է ՍՁ-ն տարբերվում ավանդական ձեռնարկատիրությունից՝

- ՍՁ-ն ունի առաջնային սոցիալական առաքելություն՝ ուղղված մարդկանց, համայնքների, շրջակա միջավայրի բարելավմանը և բարեկեցության ապահովմանը,
- իր շահույթի մեծ մասն ուղղում է սոցիալական նպատակների իրագործմանը,
- ստեղծված չէ իր հիմնադիրների և բաժնետերերի համար մաքսիմալ շահույթի ապահովման նպատակով, ուստի շահույթը մեծապես չի վերաբաշխվում այս նպատակի համար,
- ունի կառավարման առավել ճկուն և մասնակցային համակարգ՝ միավորելով մարդկանց, որոնք ունեն համապատասխան սոցիալական կողմնորոշում,

- գնահատում և տարածում է իր սոցիալական ազդեցությունը[2]:

Գործարարության աջակցման գրասենյակի կողմից մշակված ՀՀ «Սոցիալական ձեռնակատիրության զարգացման հայեցակարգի» նախագծում[3] նույնպես առանձնացված են ՍՁ-ներին բնութագրող մի շարք առանձնահատկություններ, որոնց թվում են՝

- ՍՁ հիմքում ընկած է որևէ սոցիալական խնդրի լուծում և կիրառվում է «սոցիալական խնդիր – բիզնես մոդել – բիզնես լուծում – սոցիալական դրական ձևափոխում» մոտեցումը՝ չխախտելով կանաչ մտածողության սկզբունքը, և/կամ ՍՁ-ն ստեղծվել է բացառապես սոցիալապես խոցելի խավի աշխատանքային ինտեգրումն ապահովելու նպատակով,
- Ստացված նվիրատվությունների և դրամաշնորհների հատկացումները չեն գերազանցում շրջանառության 30%-ը,
- Շահույթի առնվազն 50%-ը ներդրվում է կազմակերպության զարգացումը խթանելու նպատակով և/կամ ուղղվում է կանոնադրությամբ (բացառությամբ՝ ԱՁ-ի) սահմանված սոցիալական ազդեցության ապահովմանը,
- ՍՁ-ն չի գործում սահմանված այն ոլորտներում, որոնց շրջանակներում ՍՁ-ները գործել չեն կարող, օրինակ՝ ծխախոտի ու ալկոհոլի արտադրություն, որսորդություն, հանքարդյունաբերություն և այլն,
- Որդեգրել է կառավարման բարեխիղճ հիմունքներ՝ թափանցիկություն, բացություն, մասնակցային կառավարում կամ ներառական որոշումների կայացում:

Ընդհանրացնելով ՍՁ վերաբերյալ այս երկու բնութագրիչները կարող ենք առանձնացնել այն կատեգորիաները, որոնց շուրջ իրականացվել է վերլուծությունը՝

- Ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակ և շարժառիթ
- Շրջակա միջավայրի պաշտպանություն
- Շահույթի վերաբաշխում
- Կառավարման մասնակցայնություն, ճկունություն և բացություն

Սոցիալական ձեռնարկատիրության և ավանդական ձեռնարկատիրության տարբերությունն ըստ վերոնշյալ վերլուծական կատեգորիաների ներկայացված է Աղյուսակ 2–ում:

Սոցիալական ձեռնարկատիրություն	Ավանդական ձեռնարկատիրություն
Ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու շարժառիթը սոցիալական ազդեցությունն է	Ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու շարժառիթը շահույթ ստանալն է
ՍՁ գործունեությունն ուղղված է շրջակա միջավայրի բարելավմանը և բարեկեցության	Ձեռնարկատիրական գործունեությունը չի սահմանափակվում այն ոլորտներում, որոնք

[2] Ս. Մխիթարյան, Կ. Հ. Սարգսյան, Գ. Վարդանյան, «Ինչպե՞ս իրականացնել սոցիալական ձեռնարկատիրություն. Մեթոդական ուղեցույց», ՔՁՀՀ, 2019
[3] https://www.e-draft.am/projects/1180/about

ապահովմանը	կարող են բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մարդկանց բարեկեցության վրա
Շահույթի մեծ մասն ուղղվում է սոցիալական նպատակների իրագործմանը	Ձեռնարակատերն ազատ է տնօրինել շահույթն ըստ իր հայեցողության
Ունի կառավարման առավել ճկուն և մասնակցային համակարգ	Ձեռնարկության կառավարումն առավել հաճախ իրականացվում է միանձնյա՝ ձեռնարկատիրոջ կողմից
Որդեգրել է կառավարման բարեխիղճ հիմունքներ՝ թափանցիկություն և բացություն	Կառավարման հիմունքներում սահմանափակումներ չկան

Աղյուսակ 2. Սոցիալական ձեռնարկատիրության և ավանդական ձեռնարկատիրության տարբերությունները

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են 2-րդ և 3-րդ դասարաններում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի համար նախատեսված ուսուցչի ձեռնարկները, տարրական դպրոցի 2-3-րդ դասարաններում տեխնոլոգիա դասավանդող ուսուցիչների համար «Ձեռնարկատիրական կրթության» ձեռնարկը, «Աշակերտական գործարար ընկերություն» ծրագրի ձեռնարկատիրական կրթության ուղեցույցը ավարգ դպրոցի ուսուցիչների և աշակերտների համար:

Ուսուցչի ձեռնարկ 2-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի համար: 2-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի ուսուցչի ձեռնարկում ներառված են ձեռնարկատիրական կրթության հետևյալ թեմաները՝ 1. Ձեռնարկատեր և ձեռնարկատիրություն 2.Միտք/մտահղացում 3. Աշխատանքի պլանավորում: Ձեռնարկում սոցիալական ձեռնարկատիրությանը կամ նրա առանձին տարրերին ուղղակի և անուղղակի անդրադարձ չի կատարվում: «Ձեռնարկատեր և ձեռնարկատիրություն» թեմայի ներքո տրվում է «ձեռներեցի» սահմանումը, որի հիմքում դրված է ձեռներեցը որպես «բարիքի ստեղծող, որի նպատակն է այն վաճառել և փող վաստակել»[4] սահմանումը: Այս հատվածում մի քանի անգամ շեշտադրվում է, որ «ձեռներեցը ապրանք է արտադրում կամ ծառայություն է մատուցում՝ շահույթ ստանալու նպատակով կամ... ձեռներեցը բարիք է ստեղծում փող վաստակելու ակնկալիքով»: Ձեռնարկի հաջորդ հատվածներում ներկայացված է «ձեռներեցի» և «իր և իր ընտանիքի համար բարիք ստեղծողի» տարբերությունները՝ տարանջատելով «լոկ բարիք ստեղծող»-ին (մարդ, ով իր և իր ընտանիքի համար է բարիք ստեղծում) և ձեռներեցին (մարդ, ով վաճառելու և փող վաստակելու նպատակով է բարիք ստեղծում)[5]: Այստեղ ևս մեկ անգամ շեշտադրվում է, որ ձեռներեցը «այլ մարդկանց համար բարիք է ստեղծում փող վաստակելու նպատակով: Եթե ձեռներեցը հասկանա, որ այդ բարիքը ստեղծելով փող չի վաստակի, նա պարզապես կհրաժարվի այդ գործից և այդ բարիքը չի արտադրի: Ձեռներեցի նպատակը փող վաստակելն է»: Ձեռնարկի այն հատվածում, երբ ուսուցիչը աշակերտների հետ քննարկում է, թե ինչու է փողն անհրաժեշտ ձեռներեցին, որպես հիմնական օրինակներ նշվում են միայն ձեռներեցի

[4] Ուսուցչի ձեռնարկ 2-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի համար, Երևան 2018, էջ 8
[5] Նույն տեղում՝ էջ 11

անձնական կարիքները, ինչպես օրինակ «ձեռք բերել բարիքներ... սնունդ, հագուստ, մեքենա գնել, այցելել բժշկի, ճանապարհորդել և այլն»: Սոցիալական ձեռնարկատիրության տարրերին որոշակի հղում առկա է միայն ձեռնարկի նախաբանում, որտեղ մասնավորապես նշված է, որ «ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը սովորողին կխրախուսի նաև խորհել... արդյոք ինքն այդ [ավել. վաճառքի համար նախատեսված] առարկայի պատրաստումով չի վնասի շրջակա միջավայրը և բնությունը»[6], ինչը հղում է կատարում ՍԶ կողմից որդեգրված կանաչ մտածողության սկզբունքին:

Ուսուցչի ձեռնարկ 3-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի համար: 3-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի ուսուցչի ձեռնարկում ներառված են ձեռնարկատիրական կրթության հետևյալ թեմաները՝ 1. Ապրանքներ/ծառայություններ 2.Բիզնես գաղափար 3. Գովազդ: Այս ձեռնարկում նույնպես սոցիալական ձեռնարկատիրությանն ուղղակի անդրադարձ չի կատարվում, իսկ ձեռներեցը սահմանվում է որպես «...մարդ ով բարիք է ստեղծում փող աշխատելու նպատակով»[7]: Բիզնես գաղափար ունենալու հիմքում նույնպես դրված է փող վաստակելու շարժառիթը. «բարիք ստեղծելու և դրանով փող վաստակելու համար ձեռներեցը պետք է միտք/մտահղացում (բիզնես գաղափար) մտածի»: Ձեռնարկի նախաբանում, սակայն, առկա է որոշակի հղում սոցիալական ձեռնարկատիրության տարրերին, մասնավորապես նշվում է, որ սովորողները պետք է մտածեն, թե ինչպես են իրենց կողմից ստեղծված ապրանքները և ծառայությունները «բարելավում մարդկանց կյանքի որակը»: Այս հատվածում նաև նշվում է, որ «Ձեռնարկատիրական կրթություն» բաղադրիչի ուսումնառության հիմնական նպատակը ստեղծարար և նորարար մտքի զարգացումն է և ոչ թե ինչ-որ իր պատրաստելու և այն վաճառելու միջոցով գումար աշխատելը[8]:

Տարրական դպրոցի 2-3-րդ դասարաններում տեխնոլոգիա պարապող ուսուցիչների համար «Ձեռնարկատիրական կրթության» ձեռնարկ: Ձեռնարկը հիմնականում կրկնում է 2-րդ և 3-րդ դասարաններում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի վերաբերյալ ձեռնարկներում ներկայացված նյութը, սակայն ունի հավելյալ «Տեսական նյութ ուսուցիչների համար» բաժին, որտեղ ներկայացված են լրացուցիչ նյութեր ձեռներեցության վերաբերյալ: Բաժնում ներկայացված են ձեռներեցի, ձեռներեցության, ձեռներեցին բնորոշ անձնային հատկանիշների, ձեռնարկատիրական գիտելիքների և հմտություններ, ռիսկերի, նորարարության, ապրանքի, ծառայության, արտադրական գործոնների, բնական ռեսուրսների, կապիտալ ռեսուրսների, աշխատանքային ռեսուրսների, վաճակալական վճարի, տոկոսի, աշխատավարձի, շահույթի սահմանումները: Ձեռներեցը սահմանվում է որպես «անձ, ով շահույթ ստանալու նպատակով հիմնում և կազմակերպում է իր սեփական գործը և ենթարկվում է այդ գործի հետ կապված ռիսկին»: Անձի

[6] Ուսուցչի ձեռնարկ 2-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի համար, Երևան 2018, էջ 4
[7] Ուսուցչի ձեռնարկ 3-րդ դասարանում տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող «Ձեռնարկատիրական կրթություն» մասի համար, Երևան 2018, էջ 8
[8] Նույն տեղում՝ էջ 3

ձեռնարկատիրական ընդունակությունները ներառում են նախաձեռնողականությունը, ստեղծագործելու կարողությունը, նորարարությունը, ռիսկի դիմելու ընդունակությունը, ինչպես նաև նպատակին հասնելու, ծրագրեր նախագծելու և դրանք կառավարելու հմտությունը: Ձեռներեցի հիմնական նպատակը և գործ հիմնելու շարժառիթը շահույթ վաստակելու հեռանկարն է: Այստեղ ևս մեկ անգամ շեշտադրվում է, որ հենց շահույթ վաստակելու հեռանկարն է ձեռներեցին մղում հիմնելու իր սեփական գործը[9]: Այս ձեռնարկի նախաբանում նույնպես ներկայացված է հատված, որտեղ հեղինակները խոսում են շրջակա միջավայրի և բնության պահպանության մասին, մասնավորապես ներկայացված է, որ աշակերտները պետք է խորհեն, արդյոք [ավել. վաճառքի համար նախատեսված] առարկայի պատրաստումով նրանք չեն վնասի շրջակա միջավայրը և բնությունը»՝ հղում կատարելով ՍՁ բնապահպանական հանձնառությանը[10]:

«Աշակերտական գործարար ընկերություն» ծրագրի ձեռնարկատիրական կրթության ուղեցույց ավագ դպրոցի ուսուցիչների և աշակերտների համար: Այս ձեռնարկն անդրադառնում է «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության «Աշակերտական գործարար ընկերություն» (ԱԳԸ) ծրագրին, որն ավագ դպրոցի ձեռնարկատիրական կրթության և տնտեսագիտական տեսական դասընթացի գործնական հավելվածն է: Ծրագիրն օգնում է աշակերտներին ծանոթանալ ազատ ձեռնարկատիրական համակարգին պրակտիկ գործունեություն ծավալելու միջոցով, ինչի համար աշակերտները հիմնում են աշակերտական գործարար ընկերություն որպես բաց կամ փակ բաժնետիրական ընկերություն: Ծրագիրը ներառում է 12 թեմա, որոնց թվում են ԱԳԸ հիմնումը, շուկայի հետազոտությունը, բիզնես պլանի կազմումը, արժեթղթերի թողարկումը և վաճառքը, բիզնես և աշխատանքային էթիկան, արտադրության և վաճառքի կազմակերպումը, փաստաթղթավարությունը և կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը:

Ձեռնարկի որակական վերլուծությունը ցույց տվեց, որ թեև այն ուղղակի անդրադարձ չի կատարում սոցիալական ձեռնարկատիրությանը, սակայն արտացոլում է վերջինիս բնուգագրիչ մի շարք սկզբունքներ և դրույթներ: Մասնավորապես, «ԱԳԸ առաքելությունը, նպատակները և արժեքային համակարգը» հատվածում թեև շեշտադրվում է, որ ԱԳԸ նպատակը շահույթ վաստակելն է, սակայն կարևոր է նաև որոշակի արժեքային համակարգի որդեգրումը և կիրառումը ԱԳԸ կողմից: Ձեռնարկի կողմից ԱԳԸ գործունեության արժեքային համակարգի հիմքում առաջարկվող սկզբունքները հարում են սոցիալական ձեռնարկատիրությանը, ինչպես օրինակ «ձեռնարկությունը որոշում է կայացնում չվնասել շրջակա միջավայրը, պահպանել բնապահպանական նորմերը, երբեք և ոչ մի դեպքում չոտնահարել մարդու իրավունքները և այլն»[11]: Բիզնես և աշխատանքային էթիկա բաժնում նույնպես ներկայացվում են բիզնեսի վարման որոշակի սկզբունքներ, որոնք հարում եմ ՍՁ-ին, ինչպես օրինակ

[9] «Ձեռնարկատիրական կրթության» ձեռնարկ, տարրական դպրոցի 2-3-րդ դասարաններում տեխնոլոգիա պարապող ուսուցիչների համար, Երևան, 2017թ., էջ 59-61

[10] Նույն տեղում, էջ 3

[11] «Հայաստանի պատանեկան նվաճումներ», «Աշակերտական գործարար ընկերություն» ծրագրի ձեռնարկատիրական կրթության ուղեցույց ավարգ դպրոցի ուսուցիչների և աշակերտների համար, Երևան, 2017, էջ 10

> թափանցիկությունն է, մասնակցային կառավարումը և ներառական որոշումների կայացումը, որը տեղի է ունենում ԱԳԸ ընդհանուր ժողովի միջոցով[12]: Թեմա 11-ն անդրադառնում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանը (ԿՍՊ), որի շրջանակներում ներկայացվում են դրույթներ, որոնք հիմնականում ներկայացնում են սոցիալական ձեռնարկատիրության գործունեության սկզբունքները, թեև այս դեպքում նույնպես ուղղակի անդրադարձ այս հասկացությանը չի կատարվում: Այստեղ շեշտադրվում է, որ թեև յուրաքանչյուր ձեռնարկության հիմնական նպատակը շահույթի ստացումը և դրա ծավալների մեծացումն է, սակայն ներկայումս ձեռնարկությունները «գնալով ավելի մեծ ուշադրություն են դարձնում շրջակա միջավայրի, բնակչության տնտեսապես խոցելի շերտերի և ընդհանուր առմամբ հասարակական խնդիրներին»: Այստեղ ներկայացվում է, որ գործարարը «սոցիալական պատասխանատվություն պետք է ունենա իր աշխատողի, նրա ընտանիքի, համայնքի ու այդպիսով լայն հասարակության նկատմամբ»: Այս հատվածում նաև ներկայացված է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և բարեգործության տարբերությունները[13]:

Այսպիսով, թեև «Ձեռնարկատիրական կրթության» ներդրմանն ուղղված ձեռնարկներն ուղղակի անդրադարձ չեն կատարում սոցիալական ձեռնարկատիրությանը, սակայն վերջինիս բնութագրող որոշակի տարրեր առկա են դասավանդվող նյութում, մասնավորապես խոսվում է այն մասին, թե որքանով է աշակերտների կողմից նախաձեռնվող ձեռնարկատիրական կրթությունը բարելավելու մարդկանց կյանքը և արդյոք անվտանգ է շրջակա միջավայրի համար: Ձեռնարկներում չի խոսվում շահույթի օգտագործման հնարավոր տարբերակների մասին: Թեև որպես ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հիմնարար շարժառիթ նշվում է փող վաստակելը (ինչը բնութագրում է ավանդական ձեռնարկատիրությունը), սակայն հեղինակները շեշտադրում են, որ դասընթացի նպատակը աշակերտների մոտ ձեռնարկատիրական հմտությունների, կարողությունների և ստեղծարար մտքի զարգացումն է, իսկ փող վաստակելն այս դեպքում երկրորդական է:

[12] «Հայաստանի պատանեկան նվաճումներ», «Աշակերտական գործարար ընկերություն» ծրագրի ձեռնարկատիրական կրթության ուղեցույց ավարգ դպրոցի ուսուցիչների և աշակերտների համար, Երևան, 2017, էջ 38-42

[13] Նույն տեղում՝ էջ 56-59

3.2 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Աշակերտների շրջանում իրականացված անկետավորման շրջանակներում վերջիններիս նաև հարց է ուղղվել, թե որքանով են նրանք ծանոթ «սոցիալական ձեռնարկատիրությանը»: Համաձայն արդյունքների՝ ազդեցության խմբում հարցման ենթարկված աշակերտների 13%-ը տեղյակ է և գիտի թե ինչ է սոցիալական ձեռնարկությունը, 36%-ը լսել է և մակերեսային ծանոթ է բովանդակությանը, 38%-ը՝ լսել է, սակայն չի կարող մանրամասնել թե ինչ է այն, իսկ 14%-ը՝ ընդհանրապես ծանոթ չէ այս հասկացությանը: Ստուգիչ խմբում արձանագրվել է գրեթե նույն պատկերը: Այսպիսով, համաձայն անկետավորման արդյունքների, ներառված աշակերտների հիմնական մասն այս կամ այն չափով ծանոթ է սոցիալական ձեռնարկատիրությանը (Գրաֆիկ 6):



Գրաֆիկ 6. ՍՁ վերաբերյալ իրազեկվածությունն աշակերտների շրջանում

Ինչ վերաբերում է սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ իրազեկվածության աղբյուրներին, ապա ազդեցության խմբի դեպքում ՍՁ հասկացությանը ծանոթ աշակերտների գրեթե կեսը (46%) որպես տեղեկատվության աղբյուր է նշել դպրոցական դասերը, 33%-ը՝ կարդացել է այս մասին համացանցում, մինչդեռ ստուգիչ խումբը որպես տեղեկատվության աղբյուր առավել հաճախ նշել է համացանցը (37%) և հեռուստատեսությունը (29%), և ստուգիչ խմբում անկետավորմանը մասնակցած աշակերտների միայն 20%-ն է նշել, որ ՍՁ վերաբերյալ տեղեկացել է դասերի արդյունքում (Գրաֆիկ 7):



Գրաֆիկ 7. ՍԶ վերաբերյալ աշակերտների տեղեկատվության աղբյուրների կազմը

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ թեև դպրոցական ուսումնական նյութերը անդրադարձ չեն կատարում «սոցիալական ձեռնարկատիրությանը», սակայն աշակերտները հիմնականում ծանոթ են այս հասկացությանը: «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան ուսանող աշակերտները որպես ՍԶ վերաբերյալ իրազեկվածության հիմնական աղբյուր նշել են դպրոցական դասերը՝ ի տարբերություն առարկան չուսանող աշակերտների, որոնց դեպքում տեղեկատվության հիմնական աղբյուրներ են եղել համացանցը և հեռուստատեսությունը:

Ինչ վերաբերում է «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան դասավանդող ուսուցիչներին, ապա նրանց մի մասը ծանոթ էր սոցիալական ձեռնարկատիրության գաղափարին, մի մասը՝ ոչ: Ուսուցիչները հիմնականում դրական են արտահայտվել դպրոցներում սոցիալական ձեռնարկատիրություն դասընթացի ներդրման գաղափարին և առաջարկել են այն 10-12-րդ դասարաններում ներդնել որպես առանձին կամընտրովի առարկա, որպեսզի դասընթացին հաճախեն այն աշակերտները, ում այն առավել կհետաքրքրի: Ուսուցիչների մի մասն էլ կարծում է, որ սոցիալական ձեռնարկատիրությունն անհրաժեշտ է ընդգրկել «հասարակագիտություն» առարկայի մեջ՝ խտացնելով դասընթացում առկա թեմաները և ներդնելով սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ նոր թեմաներ:

«Ձերնարկատիրական կրթությունն արդեն ուսումնասիրվում է, և՛ ես, և՛ աշակերտները ունենք բավականին մեծ պատկերացում բիզնեսի մասին: Իմ կարծիքով, եթե տնտեսագիտություն դասավանդվում է դպրոցում, ապա հենց նույն մասնագետն էլ պետք է դասավանդի նաև ձեռնարկատիրություն և սոցիալական ձեռնարկատիրություն»:

խորին հարցազրույց ավագ դպրոցի ՁԿ դասավանդող ուսուցչի հետ

Ուսուցիչները նաև շեշտադրել են, որ անհրաժեշտ է հստակ տարանջատել «կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» և «սոցիալական ձեռնարկատիրություն» թեմաները,

որպեսզի աշակերտների համար հստակ հասկանալի լինի այս երկու հասկացությունների տարբերությունները: Ուսուցիչները նաև առաջարկել են սոցիալական ձեռնարկատիրության առարկայի շրջանակներում նախատեսել պրակտիկ այցելություններ այսպիսի ձեռնարկություններ, ինչն աշակերտներին կօգնի ավելի լավ պատկերացում կազմել, թե ինչպես են գործառնում սոցիալական ձեռնարկությունները:

«Շատ կարևոր է, որ երեխաները գոնե մեկ անգամ գնան տեսնեն որևէ սոցիալական ձեռնարկատիրություն, որպեսզի ավելի լավ պատկերացնեն այն՝ իր նպատակներով, առաքելությամբ: Կարծում եմ, դա երեխաների մոտ կօգնի ձևավորել նոր արժեհամակարգ: Այսօր մենք այսպիսի այցելություններ կազմակերտանելու հետ կապված դժվարություններ ունենք»:

խորին հարցազրույց ավագ դպրոցի ՁԿ դասավանդող ուսուցչի հետ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ունենալով իրականացված հետազոտության արդյունքները՝ կատարվել են հետևյալ եզրակացությունները՝

- Ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված աշակերտների ծնողները հիմնականում դրական վերաբերմունք ունեն «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի նկատմամբ և կարևորում են այս առարկայի ուսումնառությունը:
- 2-րդ և 3-րդ դասաանների ծնողներն ունեն մտավախություն առ այն, որ այս դասարանների երեխաների համար դեռևս վաղ է ՁԿ ուսուցանումը: Ծնողների մի մասը դրական չի վերաբերում, որ աշակերտները ներգրավված են լինելու «վաճառքի» գործընթացում:
- Ձեռնարկատիրական կրթության դասերն ունեցել են հստակ սահմանված նպատակներ և դասի կառուցվածքը և բովանդակությունն ուղղված է եղել այդ նպատակների իրականացմանը:
- Ընդհանուր առմամբ ձեռնարկատիրական կրթության դասընթացում ուսուցիչների կողմից կիրառվել են ինտերակտիվ և խաղային մեթոդներ, որոնք եղել են արդյունավետ և նպաստել են աշակերտների ընդգրկվածության ավելացմանը դասապրոցեսում:
- Ընդհանուր առմամբ ՁԿ շրջանակներում աշակերտներին մատուցվող նյութը եղել է հեշտ և հասկանալի, բարձր է եղել աշակերտների ներգրավվածությունը, ակտիվությունը, հարցերին պատասխանելու և կարծիք արտահայտելու ցանկությունը:
- ՁԿ ուսումնառող աշակերտների հիմնական մասը դրական է վերաբերում «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացին, այն համարում է հետաքրքիր և օգտակար, իսկ ստացած գիտելիքները և հմտությունները՝ կիրառելի
- ՁԿ դասընթացում ներառված տարբեր թեմաների վերաբերյալ իրենց գիտելիքները և հմտությունները աշակերտները հիմնականում գնահատել են միջինից բարձր:
- ՁԿ դասընթացն ունեցել է որոշակի ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ աշակերտների շրջանում դրական վերաբերմունքի ձևավորման հարցում, ինչն արտահայտվում է ՁԿ դասընթացն ուսանող աշակերտների շրջանում ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ առավել դրական վերաբերմունքով՝ ի տարբերություն ՁԿ դասընթացը չուսանող ստուգիչ խմբի:
- «Ձեռնարկատիրական կրթության» ներդրմանն ուղղված ձեռնարկներն ուղղակի անդրադարձ չեն կատարում սոցիալական ձեռնարկատիրությանը որպես առանձին հասկացության, սակայն վերջինիս բնութագրող որոշակի տարրեր առկա են դասավանդվող նյութում:
- Թեև դպրոցական ուսումնական նյութերը անդրադարձ չեն կատարում «սոցիալական ձեռնարակատիրությանը», սակայն աշակերտները հիմնականում ծանոթ են այս հասկացությանը: «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան ուսանող աշակերտները որպես ՍԶ վերաբերյալ իրազեկվածության հիմնական աղբյուր նշել են դպրոցական դասերը՝ ի տարբերություն առարկան չուսանող աշակերտների, որոնց դեպքում տեղեկատվության հիմնական աղբյուրներ են եղել համացանցը և հեռուստատեսությունը: